

«Արմենիան Զափրր Փրոգրամ» ՓԲԸ

**Համախմբված ֆինանսական հաշվետվություններ
2007թ. դեկտեմբերի 31-ին
ավարտված տարվա համար**

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն	5
Համխմբված հաշվապահական հաշվեկշիռ	6
Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն	8
Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	9-53

Թարգմանության ծանուցում

Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն կազմված 2007թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համախմբված ֆինանսական հաշվետվությունները և աուդիտորական եզրակացությունը պատրաստվել են անգլերեն լեզվով: Այդ փաստաթղթերին կից ներկայացվող թարգմանությունը պատրաստվել է օգտագործողների հարմարության համար: Հայերեն և անգլերեն տարբերակների անհամապատասխանության դեպքում, միանշանակորեն գերակայում է անգլերեն տարբերակը:



KPMG Armenia cjsc
8 Hanrapetutian Street
Yerevan 0010
Republic of Armenia

Քեյ-Փի-Էն-Ջի Արմենիա ՓԲԸ
Հանրապետության 8
Երևան 0010
Հայաստանի Հանրապետություն

Telephone Հեռախոս + 374 (10) 566 762
Fax Ֆաքս + 374 (10) 566 762
Internet Ինտերնետ www.kpmg.am

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Արմենիան Քափրը Փրոգրամ» ՓԲԸ-ի
Տնօրենների խորհրդի անդամներին

Համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ եզրակացություն

Մենք աուդիտի ենք ենթարկել «Արմենիան Քափրը Փրոգրամ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ «Ընկերություն») և նրա դուստր ընկերությունների (այսուհետ՝ «Խումբ») կից ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են համախմբված հաշվապահական հաշվեկշիռը՝ առ 31-ը դեկտեմբերի 2007թ., այդ ամսաթվին ավարտված տարվա համար ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները և այլ բացատրական ծանոթագրություններ:

Ղեկավարության պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Մույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն կազմման և ճշմարիտ ներկայացման համար պատասխանատու է ղեկավարությունը: Այս պատասխանատվությունը ենթադրում է սխալների կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար տեղին ներքին վերահսկողության համակարգի մշակում, ներդրում և կիրառում: Այս պատասխանատվությունը ենթադրում է նաև համապատասխան հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրություն և կիրառություն, ինչպես նաև ողջամիտ հաշվապահական գնահատականների օգտագործում:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն անցկացրեցինք Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք հետևենք էթիկայի համապատասխան պահանջներին և աուդիտը պլանավորենք ու իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվություններն էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են այնպիսի ընթացակարգերի իրականացում, որոնք թույլ են տալիս ձեռք բերել աուդիտորական ապացույցներ ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ: Ընտրված ընթացակարգերը կախված են աուդիտորի դատողությունից, ներառյալ ֆինանսական հաշվետվությունների՝ խարդախությամբ կամ սխալներով պայմանավորված էական խեղաթյուրումների ռիսկի գնահատումը: Այս ռիսկը գնահատելիս աուդիտորը դիտարկում է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ կերպով ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության համակարգը՝ նպատակ ունենալով մշակել համապատասխան աուդիտորական ընթացակարգեր՝ բայց ոչ կարծիք արտահայտել կազմակերպության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանության, ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների խելամտության, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

*«Արմենիան Բափըր Փրոգրամ» ՓԲԸ
Ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն
2007թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար*

		2007թ. հազ. դրամ	2006թ. հազ. դրամ
	Ծնթգ.		Վերահաշվարկված
Հասույթ	6	24,253,761	31,087,667
Վաճառքի ինքնարժեք	7	(18,313,356)	(26,405,776)
Համախառն շահույթ		5,940,405	4,681,891
Այլ եկամուտ	8	32,377	44,941
Իրացման ծախսեր	9	(185,825)	(324,277)
Վարչական ծախսեր	10	(1,031,375)	(1,379,628)
Արժեզրկում	11	10,197	(26,597)
Այլ ծախսեր	12	(230,709)	(371,007)
Գործառնական գործունեության արդյունքները		4,535,070	2,625,323
Ֆինանսական եկամուտ և ծախսեր	13	40,489	413,099
Շահույթ մինչև շահութահարկով հարկումը		4,575,559	3,038,422
Շահութահարկի գծով ծախս	14	(436,504)	(285,669)
Տարվա շահույթ		4,139,055	2,752,753

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2008թ. ապրիլի 29-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

(Ստորագրություն)
Գագիկ Արզումանյան
Գործադիր տնօրեն

(Ստորագրություն)
Տիգրան Խաչատրյան
Ֆինանսական տնօրեն



Ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի 9-ից 53-րդ էջերում ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Անգլերեն լեզվով պատրաստված փաստաթղթի թարգմանություն: Տես՝ թարգմանության ծանուցում, էջ 2:

	Ծնթգ.	2007թ. հազ. դրամ	2006թ. հազ. դրամ Վերահաշվարկված
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	15	9,908,200	9,428,955
Ոչ նյութական ակտիվներ	16	49,242	46,742
Ներդրումային գույք	17	145,609	148,478
Հանքարդյունաբերական գույք	18	944,312	664,357
Հետազոտման և զնահատման ակտիվներ	19	2,323,221	1,492,207
Այլ ներդրումներ	20	40,647	35,647
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		13,411,231	11,816,386
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	21	2,780,523	2,669,420
Ստացվելիք շահութահարկ		-	176,808
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	22	5,625,968	1,837,718
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	23	140,756	135,013
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		8,547,247	4,818,959
Ընդամենը ակտիվներ		21,958,478	16,635,345
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Սեփական կապիտալ			
Բաժնետիրական կապիտալ	24	3,069,716	3,069,716
Վերագնահատման պահուստ		5,439,850	5,679,621
Չբաշխված շահույթ		7,677,095	3,298,269
Ընդամենը սեփական կապիտալ		16,186,661	12,047,606
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	26	2,130,501	146,971
Հետաձգված հարկային պարտավորություններ	25	1,506,923	1,456,978
Կառավարության շնորհներ	27	77,393	78,973
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		3,714,817	1,682,922
Ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	26	591,558	1,652,735
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	28	1,421,106	1,252,082
Վճարվելիք շահութահարկ		44,336	-
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		2,057,000	2,904,817
Ընդամենը պարտավորություններ		5,771,817	4,587,739
Ընդամենը սեփական կապիտալ պարտավորություններ		21,958,478	16,635,345

Համախմբված հաշվապահական հաշվեկշիռը պետք է ընթերցվի 9-ից 53-րդ էջերում ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Անգլերեն լեզվով պատրաստված փաստաթղթի բարգմանություն: Տես՝ բարգմանության ծանուցում, էջ 2:

	2007թ.	2006թ.
	հազ. դրամ	հազ. դրամ
ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ		
Հաճախորդներից ստացված դրամական միջոցներ	24,422,641	33,212,666
Պետական բյուջեից ստացված դրամական միջոցներ (ԱԱՀ)	2,892,323	5,869,085
Մատակարարներին վճարված դրամական միջոցներ	(24,847,815)	(35,857,802)
Աշխատակիցներին վճարված դրամական միջոցներ	(918,848)	(671,800)
Վճարված շահութահարկ	(175,500)	(252,450)
Վճարված հարկեր, բացառությամբ շահութահարկի	(601,958)	(449,113)
Վճարված տոկոսներ	(98,532)	(357,620)
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից	672,311	1,492,966
ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ		
Հիմնական միջոցների ձեռք բերում	(681,231)	(978,554)
Ներդրումներ հանքաարդյունաբերական գույքում	(125,182)	(259,736)
Ներդրումներ հետազոտման և զնահատման ակտիվներում	(712,476)	(938,927)
Ոչ նյութական ակտիվների ձեռք բերում	-	(13,939)
Հոսքեր հիմնական միջոցների վաճառքից	355	32,645
Հոսքեր այլ ներդրումներից	226	-
Այլ ներդրումների ձեռք բերում	-	(10,000)
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից	(1,518,308)	(2,168,511)
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ		
Հոսքեր փոխառություններից	9,960,830	593,070
Փոխառությունների մարում	(9,505,602)	-
Հոսքեր բաժնետիրական կապիտալի թողարկումից	500,000	-
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից	955,228	593,070
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)	109,231	(82,475)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբի դրությամբ	135,013	123,388
Փոխանակման փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(103,488)	94,100
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջի դրությամբ (ծնթգ. 23)	140,756	135,013

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի 9-ից 53-րդ էջերում ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Անգլերեն լեզվով պատրաստված փաստաթղթի թարգմանություն: Տես՝ թարգմանության ծանուցում, էջ 2:

հազ. դրամ	Բաժնետիրական կապիտալ	Վերագնահատման պահուստ	Կուտակված շահույթ	Ընդամենը
Մնացորդը առ 1 հունվարի 2006թ.	3,069,716	2,556,206	666,047	6,291,969
Վերահաշվարկ նախորդ տարվա սխալի պատճառով (ծնթգ. 3 (յ))	-	-	(210,605)	(210,605)
Վերահաշվարկված մնացորդը առ 1 հունվարի 2006թ.	3,069,716	2,556,206	455,442	6,081,364
Տարվա զուտ շահույթ	-	-	2,728,603	2,728,603
Հիմնական միջոցների վերագնահատում, առանց 396,621 հազար դրամ զումարով հետաձգված հարկի	-	3,569,591	-	3,569,591
Հիմնական միջոցների վերագնահատման պահուստի իրացում	-	(90,074)	90,074	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2006թ.	3,069,716	6,035,723	3,274,119	12,379,558
Վերահաշվարկ նախորդ տարվա սխալի պատճառով (ծնթգ. 3 (յ))	-	(356,102)	24,150	(331,952)
Վերահաշվարկված մնացորդը առ 1 հունվարի 2007թ.	3,069,716	5,679,621	3,298,269	12,047,606
Տարվա զուտ շահույթ	-	-	4,139,055	4,139,055
Հիմնական միջոցների վերագնահատման պահուստի իրացում	-	(239,771)	239,771	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2007թ.	3,069,716	5,439,850	7,677,095	16,186,661

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի 9-ից 53-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Անգլերեն լեզվով պատրաստված փաստաթղթի թարգմանություն: Տես՝ թարգմանության ծանուցում, էջ 2:

1 Նախապատմություն

(ա) Կազմակերպությունը և հիմնական գործունեությունը

«Արմենիան Քափրը Փրոգրամ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ «Ընկերություն») և նրա դուստր ընկերությունը՝ «Թեդուտ» ՓԲԸ-ն (միասին՝ «Խումբ») իրենից ներկայացնում են փակ բաժնետիրական ընկերություն Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի համաձայն: Ընկերությունը հիմնադրվել է 1997թ. օգոստոսին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

Խմբի իրավաբանական հասցեն է. Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Խանջյան 19:

Խմբի հիմնական գործունեությունը սև պղնձի արտադրությունն ու իրացումն է: Ի լրումն, Խումբը ներգրավված է հանքերի շահագործման և Հայաստանում հանքաարդյունաբերական գործունեության զարգացման գործում: Խմբի ողջ արտադրանքն իրացվում է Հայաստանի սահմաններից դուրս:

Խմբի հայտարարված կապիտալը կազմում է 5 միլիարդ դրամ: 2007թ. և 2006թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության բաժնետերերն էին՝

- ՎԱԼԵՔՍ Ֆ.Մ. Իսթերիշմենթ (հիմնադրված Լիխտենշտեյնում) - 80.7%
- Վալերի Մեջլումյան - 19.3%

Խումբը վերահսկվում է մեկ անհատի՝ պրն. Վալերի Մեջլումյանի կողմից, որն իրավասու է կառավարել Խմբի գործառնություններն իր սեփական հայեցողությամբ և իր շահերից ելնելով: Նա նաև մասնակցություններ ունի Խմբին չպատկանող այլ ընկերություններում: Կապակցված կողմերի հետ գործարքների մանրամասները ներկայացված են ծանոթագրություն 32-ում:

(բ) Հայաստանի գործարար միջավայրը

Հայաստանի Հանրապետությունում տեղի են ունեցել քաղաքական և տնտեսական փոփոխություններ, որոնք ազդեցություն են ունեցել և կշարունակեն ազդեցություն ունենալ այս միջավայրում գործող ձեռնարկությունների գործունեության վրա: Հետևաբար, Հայաստանի գործարար միջավայրում ծավալված գործունեությունը կապված է ռիսկերի հետ, որոնք բնորոշ չեն այլ շուկաներին: Ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Խմբի ֆինանսական դրության և գործառնությունների վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

2 Պատրաստման հիմունքները

(ա) Համապատասխանության մասին հայտարարություն

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների («ՖՀՄՍ») պահանջներին համապատասխան:

(բ) Պատրաստման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքի հիման վրա, բացառությամբ հիմնական միջոցների, որոնք ներկայացված են վերագնահատված արժեքով, և որպես վաճառքի համար մատչելի դասակարգված ներդրումների, որոնք ներկայացված են իրական արժեքով:

(գ) Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է («դրամ»): Դրամը հանդիսանում է Ընկերության ֆունկցիոնալ արժույթը և համախմբված ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

(դ) Գնահատումների և դատողությունների օգտագործում

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՄ-ի պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է ակտիվների և պարտավորությունների ներկայացմանը, ինչպես նաև պայմանական պարտավորությունների և ակտիվների բացահայտմանը վերաբերող մի շարք գնահատումներ և ենթադրություններ: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և դրանց համար հիմք հանդիսացող ենթադրությունները կանոնավոր կերպով վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, երբ գնահատումները վերանայվել են, և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա ազդեցություն ունեն:

Մասնավորապես, ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա առավելագույն էական ազդեցություն ունեցող հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ժամանակ գնահատման և կարևոր դատողությունների հետ կապված զգալի անորոշությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է հետևյալ ծանոթագրություններում.

- Ծանոթագրություն 2 (ե) – հանքանյութի պաշարներ
- Ծանոթագրություն 6 – հասույթ – պարունակվող ածանցյալ գործիքների իրական արժեքի որոշում
- Ծանոթագրություն 15 – հիմնական միջոցներ,
- Ծանոթագրություն 18 – հանքաարդյունաբերական գույք,
- Ծանոթագրություն 19 – հետազոտման և գնահատման ակտիվներ,
- Ծանոթագրություն 21 – պաշարներ,
- Ծանոթագրություն 22 – առևտրական և այլ դեբիտորական պարտքեր – փոխհատուցելի ԱԱՀ:

(ե) Հանքանյութի պաշարներ

Հանքանյութի պաշարների քանակությունները գնահատելիս առկա են մի շարք անորոշություններ, ներառյալ Ընկերության վերահսկողության ներքո չգտնվող բազմաթիվ գործոններ: Հանքանյութի պաշարների գնահատումները հիմնված են հորատանցքների և այլ հանքանցքերի հանքանյութի նմուշներում բաղկացուցչի պարունակության ինժեներական գնահատումների վրա: Ի լրումն, որոշակի մետաղի շուկայական արժեքի նվազումը կարող է հանգեցնել նրան, որ միներալիզացիայի ցածր աստիճան ունեցող հանքանյութի որոշ պաշարներ կարող են դիտվել տնտեսապես ոչ նպատակահարմար հանքի հետագա օգտագործման համար: Ավելին, գործունեության իրականացման և բնօգտագործման թույլտվությունների առկայությունը, գործառնական և կապիտալ ծախսերի փոփոխությունները և այլ գործոնները կարող են էական ազդեցություն ունենալ Ընկերության հանքանյութի պաշարների գնահատումների վրա: Ընկերությունը հանքանյութի պաշարների իր գնահատումներն օգտագործում է ակտիվների արժեզրկումը գնահատելիս:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս կիրառվել է ծանոթագրություն 3 (ա)-ից 3 (զ) կետերում ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը: Հաշվապահական հաշվառման քաղաքականություն կիրառվել է հետևողականորեն:

(ա) Համախմբման հիմունքներ

(i) Դուստր ընկերություններ

Դուստր ընկերությունները Խմբի կողմից վերահսկվող ընկերություններ են: Վերահսկումն առկա է այն դեպքում, երբ Խումբն իրավասու է որոշել ընկերության ֆինանսական և տնտեսական քաղաքականությունը՝ նրա գործունեությունից օգուտներ ստանալու նպատակով: Վերահսկողությունը գնահատելիս հաշվի են առնում այդ պահին գործող քվեարկելու իրավունք տվող հնարավոր ձայները: Դուստր ընկերությունների ֆինանսական հաշվետվությունները ներառված են համախմբված ֆինանսական հաշվետվություններում՝ վերահսկումը սկսելու պահից մինչև վերահսկման դադարեցումը:

(ii) Համախմբման ընթացքում բացառվող գործառնություններ

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս բացառվում են ներխմբային հաշվարկների մնացորդները, ինչպես նաև ներխմբային գործառնություններից առաջացող ցանկացած չիրացված եկամուտները և ծախսերը: Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրման օբյեկտներից ստացված չիրացված շահույթը բացառվում է ներդրման դիմաց՝ ներդրման օբյեկտում Խմբի ունեցած մասնակցության չափով: Չիրացված վնասները բացառվում են մույն եղանակով՝ ինչ որ չիրացված շահույթները, սակայն միայն այնքանով, որքանով բացակայում է արժեզրկման վկայությունը:

(բ) Արտարժույթով գործարքներ

Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են Խմբի ընկերությունների համապատասխան ֆունկցիոնալ արժույթի գործարքների օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Իրական արժեքով չափվող արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են

ֆունկցիոնալ արժույթի իրական արժեքի որոշման օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Փոխարկման հետևանքով առաջացած արտարժույթային տարբերությունները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում, բացառությամբ վաճառքի համար մատչելի սեփական կապիտալի գործիքների փոխարկումից առաջացած տարբերությունների:

(գ) Ֆինանսական գործիքներ

(i) Ոչ ածանցյալ ֆինանսական գործիքներ

Ոչ ածանցյալ գործիքները ներառում են ներդրումները սեփական կապիտալում և պարտքային արժեթղթերը, առևտրական և այլ դեբիտորական պարտքերը, դրամական միջոցները և դրանց համարժեքները, վարկերը և փոխառությունները, առևտրական և այլ կրեդիտորական պարտքերը:

Ոչ ածանցյալ ֆինանսական գործիքներն ի սկզբանե ճանաչվում են իրական արժեքով, իսկ ֆինանսական գործիքների համար, որոնք չեն չափվում իրական արժեքով և որոնց վերաչափումից օգուտները և վնասները չեն ճանաչվում ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, գումարվում են գործարքի գծով ուղղակիորեն վերագրելի բոլոր ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո ոչ ածանցյալ ֆինանսական գործիքները չափվում են ստորև ներկայացված եղանակով:

Ֆինանսական գործիքը ճանաչվում է, երբ Խումբը դառնում է գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, եթե ֆինանսական ակտիվից ստացված դրամական միջոցների հոսքերի գծով Խմբի պայմանագրային իրավունքների ժամկետը լրացել է կամ եթե Ընկերությունը ֆինանսական ակտիվը փոխանցել է մեկ այլ կողմի՝ առանց պահպանելու ակտիվի հանդեպ վերահսկողությունը և ակտիվի գծով բոլոր հիմնական ռիսկերը և օգուտները: Ֆինանսական ակտիվի «կարգավորվող ձևի» ձեռք բերումները և վաճառքը հաշվառվում են առք ու վաճառքի ամսաթվի դրությամբ, այսինքն, այն օրվա դրությամբ, երբ Խումբը պարտավորվում է ձեռք բերել կամ վաճառել ակտիվը: Ֆինանսական պարտավորություններն ապաճանաչվում են, երբ պայմանագրում սահմանված Խմբի պարտականությունների ժամկետը լրանում է կամ վերջիններս չեղյալ են հայտատարվում, կամ ուժը կորցնում են:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ են համարվում դրամական միջոցների մնացորդները և ցպահանջ ավանդները: Բանկային օվերդրաֆտները, որոնք ենթակա են վճարման ըստ պահանջի և կազմում են Խմբի դրամական միջոցների կառավարման բաղկացուցիչ մասը, համարվում են դրամական միջոցների և դրանց համարժեքների տարր՝ դրամական միջոցների հոսքերի հաշվետվության նպատակների համար:

Ֆինանսական եկամուտի և ծախսերի հաշվառումը ներկայացված է ծանոթագրություն 3(դ)-ում:

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ

Եթե Խումբը մտադրված է և հնարավորություն ունի պարտքային արժեթղթերը պահել մինչև մարման ժամկետի լրանալը, ապա վերջիններս դասակարգվում են որպես մինչև մարման ժամկետը պահվող: Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած արժեզրկումից կորուստները:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Խմբի ներդրումները սեփական կապիտալի արժեթղթերում և որոշ պարտքային արժեթղթեր դասակարգվում են որպես վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ: Սկզբնական ճանաչումից հետո նրանք չափվում են իրական արժեքով և դրանց փոփոխությունները, բացառությամբ արժեզրկումից կորուստների և վաճառքի համար մատչելի միավորների գծով փոխարժեքային տարբերություններից շահույթի և վնասի, ճանաչվում են ուղղակիորեն սեփական կապիտալում: Երբ ներդրումն ապաճանաչվում է, սեփական կապիտալում կուտակված շահույթը կամ վնասը վերադասակարգվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն:

Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում

Գործիքը դասակարգվում է որպես իրական արժեքով չափվող, որի վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, եթե պահվում է առևտրական նպատակներով, կամ նախատեսվել է որպես այդպիսին սկզբնական ճանաչման պահին: Ֆինանսական գործիքները նախատեսվում են որպես իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որի վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, եթե Խումբը կառավարում է նման ներդրումները և ձեռքբերումների ու վաճառքի մասին որոշումները կայացնում է ելնելով դրանց իրական արժեքից՝ Խմբի ռիսկերի կառավարման կամ ներդրումների փաստաթղթավորված ռազմավարության համաձայն: Սկզբնական ճանաչման պահին գործարքի հետ կապված վերագրելի ծախսերը ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կատարվելու ժամանակաշրջանում: Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքները, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, չափվում են իրական արժեքով, իսկ դրանց փոփոխությունները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Այլ

Այլ ոչ ածանցյալ ֆինանսական գործիքները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած արժեզրկումից կորուստները: Ներդրումները սեփական կապիտալի արժեթղթերում, որոնք բորսայում գնանշված չեն և որոնց իրական արժեքը հնարավոր չէ արժանահավատորեն չափել այլ եղանակներով, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները:

(ii) Ածանցյալ ֆինանսական գործիքներ

Պարունակվող ածանցյալ գործիքները առանձնացվում են հիմնական պայմանագրից և հաշվառվում են առանձին, եթե պարունակվող ածանցյալ գործիքի տնտեսական բնութագրերը և ռիսկերը սերտորեն կապված չեն հիմնական պայմանագրի տնտեսական բնութագրերի և ռիսկերի հետ, առանձին գործիքը, որի պայմանները նման են պարունակվող ածանցյալ գործիքի պայմաններին, կբավարարեն ածանցյալ գործիքի սահմանմանը, իսկ բաղադրյալ գործիքը չի չափվում իրական արժեքով ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Ածանցյալ գործիքներն ի սկզբանե ճանաչվում են իրական արժեքով, իսկ գործարքի հետ կապված վերագրելի ծախսերը ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կատարվելու ժամանակաշրջանում: Սկզբնական ճանաչումից հետո ածանցյալ գործիքները չափվում են իրական արժեքով, և դրանց փոփոխությունները ճանաչվում են անմիջապես ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

(դ) Բաժնետիրական կապիտալ

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Սովորական բաժնետոմսերի թողարկմանն ուղղակիորեն վերագրելի լրացուցիչ ծախսումները ճանաչվում են որպես սեփական կապիտալի նվազում՝ առանց հաշվի առնելու հարկային հետևանքները:

(ե) Հիմնական միջոցներ

(i) Ճանաչում և չափում

Հիմնական միջոցների միավորները ներկայացված են վերագնահատված արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և կուտակված արժեզրկումը:

Սկզբնական արժեքը ներառում է հիմնական միջոցների ձեռք բերմանն ուղղակիորեն վերագրելի ծախսումները: Սեփական ուժերով կառուցված ակտիվների սկզբնական արժեքը ներառում է նյութերի արժեքը, աշխատուժի ծախսումները, ակտիվը իր նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված այլ արտադրական ծախսումները, ինչպես նաև ակտիվի ապամոնտաժման և շահագործումից հանման ու տեղանքի վերականգնման ծախսումները: Որակավորված ակտիվների ձեռքբերմանը կամ կառուցմանը վերաբերող փոխառության ծախսումները ճանաչվում են որպես այդ ակտիվների գծով ծախսերի մաս:

Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից շնորհված հողատարածքը ներկայացված է իրական արժեքով:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ (խոշոր բաղկացուցիչներ):

Հիմնական միջոցի միավորի օտարումից ստացված շահույթը և վնասը որոշվում են գուտ հիմունքով և ճանաչվում են «Այլ եկամուտ» հոդվածի կազմում՝ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Վերագնահատված ակտիվների վաճառքի դեպքում վերագնահատման հետևանքով առաջացած աճի գծով պահուստում ներառված գումարները վերադասակարգվում են չբաշխված շահույթի:

(ii) Հետագա ծախսումներ

Հիմնական միջոցների բաղկացուցչի փոխարինման ծախսումները ճանաչվում են միավորի հաշվեկշռային արժեքում, երբ հավանական է, որ Խումբ կհոսեն այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները և վերջինիս արժեքը հնարավոր կլինի արժանահավատորեն չափել: Փոխարինվող բաղկացուցչի հաշվեկշռային արժեքն ապաճանաչվում է: Հիմնական միջոցների ամենօրյա սպասարկման ծախսումները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կատարվելուն պես:

(iii) Վերագնահատում

Հիմնական միջոցները չափվում են իրական արժեքով՝ արտաքին անկախ գնահատողի կողմից իրականացված պարբերական գնահատումների արդյունքների հիման վրա: Հիմնական միջոցների միավորի հաշվեկշռային արժեքի վերագնահատման հետևանքով առաջացած աճն անմիջականորեն վերագրվում է սեփական կապիտալին: Սակայն եթե այդ աճը վերականգնում է նույն ակտիվի ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած նվազումը, այն ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Երբ ակտիվի

հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով նվազում է, նվազումը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Սակայն եթե այդ նվազումը հակադարձում է նույն ակտիվի սեփական կապիտալում ճանաչված նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած աճը, այն ճանաչվում է սեփական կապիտալում: Վերագնահատված ակտիվի վաճառքի դեպքում այլ պահուստներում ներառված գումարը վերադասակարգվում է չբաշխված շահույթի: Հիմնական միջոցների վերագնահատված հաշվեկշռային արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության և սկզբնական արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության տարբերությունը վերագնահատման հետևանքով առաջացած աճից փոխանցվում է չբաշխված շահույթի:

(iv) Մաշվածություն

Մաշվածությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է հիմնական միջոցի ձեռք բերման ամսաթվից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններս կառուցումն ավարտելու և շահագործման պատրաստ լինելու պահից: Հողի գծով մաշվածություն չի հաշվարկվում: Օգտակար ծառայության գնահատված ժամկետներն ընթացիկ և համեմատական ժամանակաշրջանների համար հետևյալն են.

- | | |
|---|-----------|
| • Ծեփեր | 50 տարի |
| • Կապիտալ ներդրումներ վարձակալված միջոցներում | 20 տարի |
| • Մեքենա-սարքավորումներ | 2-10 տարի |
| • Տրանսպորտային միջոցներ | 10 տարի |
| • Տնտեսական գույք | 2-10 տարի |

Հիմնական միջոցների մաշվածության հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ:

(v) Անավարտ շինարարություն

Անավարտ հիմնական միջոցներ են հանդիսանում կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցներ, որոնք ներկայացված են սկզբնական արժեքով: Սկզբնական արժեքը ներառում է նյութերի ձեռք բերման արժեքը, աշխատուժի ծախսումները և այլ ուղղակի ծախսումները: Անավարտ շինարարության գծով մաշվածության հաշվարկն սկսվում է համապատասխան ակտիվների կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից:

(գ) Ներդրումային գույք

(i) Ներդրումային գույք

Ներդրումային գույքը ներկայացված է սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

(ii) Մաշվածություն

Մաշվածությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ներդրումային գույքի առանձին միավորների օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Օգտակար ծառայության գնահատված ժամկետը կազմում է 50 տարի:

(է) Ոչ նյութական ակտիվներ

(i) Ոչ նյութական ակտիվներ

Խմբի կողմից ձեռք բերված ոչ նյութական ակտիվները ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կուտակված կորուստները:

(ii) Հետագա ծախսումներ

Հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ նրանք ավելացնում են հիմնական միջոցների միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ ընկերության ներսում ստեղծված գույքիլը և ֆիրմային անվանումները, ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

(iii) Ամորտիզացիա

Ամորտիզացիան ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Ամորտիզացիայի հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է օգտագործման համար մատչելի: Օգտակար ծառայության գնահատված ժամկետներն ընթացիկ և համեմատական ժամանակաշրջանների համար հետևյալն են.

- Համակարգչային ծրագրեր 2 տարի
- Այլ ոչ նյութական ակտիվներ 3-10 տարի

(ը) Վարձակալված ակտիվներ

Այն վարձակալությունը, որի դեպքում Խմբին են փոխանցվում ակտիվի սեփականության հետ կապված գրեթե բոլոր ռիսկերն ու օգուտները, հանդիսանում է ֆինանսական վարձակալություն: Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական վարձակալությամբ ձեռք բերված ակտիվները չափվում են իրական արժեքից և նվազագույն վարձակալական վճարների ներկա արժեքից նվազագույնով: Սկզբնական ճանաչումից հետո ակտիվը հաշվառվում է տվյալ ակտիվի հանդեպ կիրառելի հաշվապահական հաշվառման քաղաքականության համաձայն:

Վարձակալության մյուս տեսակները հանդիսանում են գործառնական վարձակալություն, և այդ վարձակալության պայմաններով վարձակալված ակտիվները չեն ճանաչվում Խմբի հաշվապահական հաշվեկշռում:

(թ) Հետագոտման և գնահատման ակտիվներ

Հետագոտման և գնահատման ծախսումները վերաբերում են հանքերի պոտենցիալ պաշարների հետագոտման և գնահատման ժամանակ կրած ծախսումներին և ներառում են այնպիսի ծախսումներ, ինչպիսիք են հանքերի շահագործման իրավունքի ձեռք բերման ծախսումները, երկրաբանական և գեոֆիզիկական ծախսումները, հետագոտական հորատման ծախսումները, նմուշների փորձարկման ծախսումները, նպատակահարմարության ուսումնասիրությանը նախորդող ծախսումները, մոնտաժման և արտադրական սարքավորումների գծով ծախսումները ու հետագոտական աշխատանքների հետ կապված վերադիր ծախսերը: Հետաքրքրության յուրաքանչյուր տեղամասի հետագոտման և գնահատման ծախսումները կապիտալացվում են և արտացոլվում են հաջորդ ժամանակաշրջանում որպես ակտիվ՝ ստորև ներկայացված պայմաններից որևէ մեկին համապատասխանելու պայմանով.

- նման ծախսումների փոխահատուցումն ակնկալվում է հետաքրքրության տեղամասի հաջող մշակման և հետագոտման կամ, որպես այլընտրանքային տարբերակ, վերջինիս վաճառքի միջոցով, կամ
- հետաքրքրության տեղամասում իրականացվող հետագոտման և գնահատման աշխատանքները դեռ չեն հասել այնպիսի փուլի, որը թույլ է տալիս ըստ պատշաճի գնահատել տնտեսապես փոխհատուցելի պաշարների առկայությունը կամ հակառակը, ինչպես նաև տեղամասում պլանավորվում է շարունակել կամ ապագայում իրականացնել ակտիվ և զգալի աշխատանքներ:

Հետագոտման և գնահատման ակտիվները դասակարգվում են նյութական և ոչ նյութական ակտիվների էլիմելով իրենց բնույթից: Հետագոտման և գնահատման ակտիվների վերը նշված դասակարգումը դադարում է, երբ ի հայտ է գալիս հանքի շահագործման տեխնիկական նպատակահարմարությունը և առևտրային կենսունակությունը: Այդ դեպքում հետագոտման և գնահատման ակտիվները վերադասակարգվում են հանքաարդյունաբերական գույքի:

Նախքան հանքերի շահագործման իրավունքի ձեռք բերումն իրականացվող գործունեությունը համարվում է նախահետադոտություն: Նախահետադոտության գծով ծախսումները ծախսագրվում են և ներառում են այնպիսի ծախսումներ, ինչպիսիք են ծրագրի սկզբնական տեխնիկական և տնտեսական գնահատման, հանքանյութի աշխարհագրական մոդելի սահմանման և գնահատման, հետադոտությանը նախորդող աշխատանքների հետ կապված վերադիր ծախսերը:

(ժ) Հանքաարդյունաբերական գույք

Հանքաարդյունաբերական գույքը ներկայացված է սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը:

(i) Մաշվածություն

Հանքաարդյունաբերական գույքի գծով մաշվածությունը հաշվարկվում է կիրառելով արդյունքի միավորի մեթոդը, հիմք ընդունելով տնտեսապես փոխհատուցելի գնահատված պաշարները, որոնց վերաբերում են կամ որոնք դուրս են գրվել գույքի չօգտագործման դեպքում:

(բ) Պաշարներ

Պաշարները ներկայացված են սկզբնական արժեքի և իրացման գուտ արժեքի նվազագույնով: Պաշարների սկզբնական արժեքը հիմնված է միջին կշռված արժեքի վրա և ներառում է պաշարների ձեռք բերման, արտադրման կամ մշակման ծախսումները, ինչպես նաև պաշարները ներկա գտնվելու վայր և ներկա վիճակի բերելու հետ կապված ծախսումները: Սեփական ուժերով կառուցված պաշարների և անավարտ արտադրանքի սկզբնական արժեքը ներառում է արտադրական վերադիր ծախսերի համապատասխան մասը՝ էլիմելով սովորական արտադրական հզորությունից:

Իրացման գուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի գնահատվող գինն է՝ հանած ավարտի հասցման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները:

(I) Արժեզրկում

(i) Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվը գնահատվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ արժեզրկման անկողմնակալ վկայություն հայտնաբերելու նպատակով: Ֆինանսական ակտիվը համարվում է արժեզրկված, եթե անկողմնակալ վկայությունը ցույց է տալիս, որ մեկ կամ ավելի իրադարձություններ բացասական ազդեցություն են ունեցել այդ ակտիվի՝ դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի վրա:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվի գծով արժեզրկումից կորուստը հաշվարկվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և այդ ֆինանսական գործիքի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերություն: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստը հաշվարկվում է ելնելով իրական արժեքից:

Առանձին-առանձին էական հանդիսացող ֆինանսական ակտիվների համար արժեզրկման ստուգումն իրականացվում է առանձին: Մնացած ֆինանսական ակտիվները ներառվում են վարկային ռիսկի համանման բնութագիր ունեցող գործիքների խմբում և ենթարկվում են խմբային գնահատման:

Արժեզրկումից բոլոր կորուստները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով կուտակված վնասը, որը նախկինում ճանաչվել է սեփական կապիտալում, վերադասակարգվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն:

Արժեզրկումից կորուստը հակադարձվում է այն դեպքում, երբ հակադարձումը կարելի է օբյեկտիվորեն վերագրել արժեզրկման կորստի ճանաչումից հետո տեղի ունեցած իրադարձությանը: Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների և պարտքային արժեթղթեր հանդիսացող վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների համար հակադարձումը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Սեփական կապիտալի արժեթղթեր հանդիսացող վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների համար հակադարձումը ճանաչվում է ուղղակիորեն սեփական կապիտալում:

(ii) Ոչ ֆինանսական ակտիվներ

Խմբի ոչ ֆինանսական ակտիվների, բացառությամբ պաշարների և հետաձգված հարկային ակտիվների, հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ որոշելու արդյոք առկա է որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված համարվել: Եթե որևէ այդպիսի հայտանիշ առկա է, ապա գնահատվում են ակտիվների փոխհատուցվող գումարները: Գուդվիլի և ոչ նյութական ակտիվների համար, որոնք ունեն ծառայություն անորոշ ժամկետ կամ դեռ մատչելի չեն օգտագործման համար, փոխհատուցվող գումարը որոշվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետագոտման և գնահատման ակտիվների համար ստորև ներկայացված փաստերը և հանգամանքները վկայում են վերջիններիս արժեզրկման ուսումնասիրության անհրաժեշտության մասին.

- այն ժամանակահատվածը, որի ընթացքում կազմակերպությունը իրավունք ունի շահագործել առանձին տեղամասը, լրացել է հաշվետու ժամակաշարջանի ընթացքում կամ կլրանա մոտ ապագայում՝ առանց երկարաձգման ակնկալիքի,

- առանձին տեղամասում հանքանյութի հետագա հետազոտման և գնահատման հետ կապված էական ծախսումները բյուջեով նախատեսված և պլանավորված չեն,
- առանձին տեղամասում հանքանյութի հետազոտումը և գնահատումը չի հանգեցրել կոմերցիոն տեսանկյունից կենսունակ քանակությամբ հանքային ռեսուրսների հայտնաբերմանը, և կազմակերպությունը որոշել է դադարեցնել այս գործունեությունն առանձին տեղամասում, ինչպես նաև
- առկա է բավարար տեղեկատվություն առ այն, որ հետազոտման և գնահատման ակտիվների հաշվեկշռային արժեքի ամբողջական փոխհատուցումը հաջող մշակման կամ վաճառքի միջոցով քիչ հավանական է:

Ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը որոշվում է որպես հետևյալ երկու մեծություններից առավելագույնը. օգտագործման արժեք և իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսերը: Օգտագործման արժեքը գնահատելիս դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը զեղչվում են՝ օգտագործելով մինչև հարկումը զեղչման այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի տվյալ շուկայի ներկա գնահատականը և այդ ակտիվին բնորոշ ռիսկերը: Արժեզրկման ստուգման նպատակով ակտիվները խմբավորվում են ակտիվների փոքրագույն խմբերի, որոնք առաջացնում են այլ ակտիվներից կամ ակտիվների խմբերից մեծապես անկախ դրամական միջոցների ներհոսքեր («դրամաստեղծ միավոր»): Արժեզրկման հայտանիշ հայտնաբերելու նպատակով ձեռնարկատիրական գործունեության միավորում ձեռքբերելու արդյունքում ստացած գուդվիլը բաշխվում է դրամաստեղծ միավորներին, որոնք, ակնկալվում է, որ օգուտ կստանան նման միավորման սիներգիզմի արդյունքում:

Արժեզրկումից կորուստը ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստը, այդ միավորի ակտիվների հաշվեկշռային արժեքը նվազեցնելու նպատակով, բաշխվում է նախ դրամաստեղծ միավորին բաշխված գուդվիլին, այնուհետև՝ դրամաստեղծ միավորի (միավորների խմբի) այլ ակտիվներին՝ համամասնական հիմունքով:

Գուդվիլի գծով արժեզրկումից կորուստները չեն հակադրաձվում: Նախորդ ժամանակաշրջաններում ճանաչված արժեզրկումից կորուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ բացահայտելու, թե առկա է արդյոք որևէ հայտանիշ, ըստ որի արժեզրկումից կորուստը հնարավոր է, որ այլևս գոյություն չունի կամ նվազել է: Արժեզրկումից կորուստը հակադրաձվում է, եթե փոխվել են փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործվող գնահատումները: Արժեզրկումից կորուստը հակադրաձվում է միայն այն չափով, որ ակտիվի հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ առանց համապատասխան մշակվածության և անորտիզացիայի, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

(խ) Հատկացումներ կենսաթոշակային հիմնադրամին

Խումբը հատկացումներ է կատարում Հայաստանի պետական կենսաթոշակային հիմնադրամին հոգուտ իր աշխատակիցների: Այդ հատկացումները ծախսագրվում են կատարվելու ժամանակաշրջանում:

(ծ) Պահուստներ

Պահուստը ճանաչվում է հաշվապահական հաշվեկշռում, երբ որպես անցյալ դեպքերի արդյունք Խումբն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն, որը կարող է արժանահավատորեն գնահատվել, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Պահուստները որոշվում են գեղչելով ակնկալվող դրամական հոսքերը՝ օգտագործելով գեղչման մինչև հարկումը կիրառելի այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի ներկա շուկայական գնահատականը և պարտականությանը բնորոշ ռիսկերը:

(կ) Հասույթ

(i) Վաճառված ապրանքներ

Հասույթը ճանաչվում է, երբ գնորդին է փոխանցվում ապրանքների սեփականության հետ կապված ռիսկերի և փոխհատուցումների էական մասը, հատուցման ստացումը հավանական է, հնարավոր է արժանահավատորեն չափել գործարքի հետ կապված ծախսերը ու ապրանքների հնարավոր վերադարձը, և չի դիտվում ապրանքների հետ կապված կառավարման շարունակական մասնակցություն: Սեփականության հետ կապված ռիսկերի և փոխհատուցումների փոխանցումը տեղի է ունենում, երբ արտադրանքը բեռնվում է համապատասխան բեռնարկներում Խմբի պահեստում:

Խմբի պղնձի վաճառքի պայմանագրերը սովորաբար նախատեսում են պայմանական վճարումներ, ինչպես նշված է անհատական վաճառքի պայմանագրերում՝ հիմք ընդունելով նմուշների հետազոտության նախնական արդյունքները և մետաղի պատմական արժեքն ընդհանուր գները: Վերջնահաշվարկը կատարվում է՝ ելնելով մետաղի շուկայական գներից՝ միջինացված արժեքն ընդհանուր որոշակի ապագա ժամանակահատվածի համար: Որպես կանոն, պղնձի համար գնանշման ապագա ժամանակաշրջանը կազմում է մինչև երկու ամիս՝ գնորդին ապրանքների սեփականության հետ կապված ռիսկերի և փոխհատուցումները փոխանցելուց հետո:

Խմբի պայմանականորեն գնանշված վաճառքի պայմանագրերը ներառում են պարունակվող ածանցյալ գործիքներ, որոնք, ապրանքի վաճառքին առնչություն չունենալու պատճառով, պետք է առանձնացվեն հիմնական պայմանագրից՝ հաշվապահական հաշվառման նպատակներով: Պարունակվող ֆինանսական գործիքը, որն իրենից ներկայացնում է ապագա գնի վրա հիմնված վերջնական հաշվարկային գինը, հաշվապահական հաշվեկշռում գրանցվում է որպես դեբիտորական պարտք կամ ստացված կանխավճար և յուրաքանչյուր ժամանակաշրջանում վերագնահատվում է (իրական արժեք) հասույթի միջոցով՝ հաշվի առնելով ապրանքի ֆորվարդային կորը մինչև վերջնահաշվարկի ամսաթիվը:

(ii) Ծառայություններ

Մատուցված ծառայություններից ստացված հասույթը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում հաշվետու ամսաթվի դրությամբ գործարքի ավարտման աստիճանի չափով: Գործարքի ավարտման աստիճանը գնահատվում է՝ ելնելով կատարված աշխատանքի ուսումնասիրության արդյունքներից:

(iii) Պետական շնորհներ

Պետական շնորհներն ի սկզբանե ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ, երբ առկա է հիմնավորված երաշխիք, որ դրանք կստացվեն և Խումբը կկատարի դրանց հետ կապված պայմանները: Շնորհները, որոնք փոխհատուցում են Խմբի ծախսերը, ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում պարբերաբար այն նույն ժամանակաշրջաններում, որոնց ընթացքում ճանաչվել են համապատասխան ծախսերը:

Շնորհները, որոնք փոխհատուցում են ակտիվի սկզբնական արժեքը, պարբերաբար ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

(հ) Վաճառքի ինքնարժեք

Վաճառքի ինքնարժեքը ներառում է ձեռք բերումների ինքնարժեքը, փոխարկման ծախսումները և պաշարները ներկա գումվելու վայր և ներկա վիճակի բերելու հետ կապված այլ ծախսումները:

(ձ) Այլ ծախսեր

(i) Վարձակալության գծով վճարներ

Գործառնական վարձակալության գծով կատարված վճարները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը վարձակալության գործողության ժամկետի ընթացքում: Վարձակալության գծով ստացված խրախուսիչ գումարները ճանաչվում են որպես վարձակալության գծով կատարած ընդհանուր վճարների բաղկացուցիչ մաս վարձակալության գործողության ժամկետի ընթացքում:

Ֆինանսական վարձակալության գծով կատարած նվազագույն վճարները բաշխվում են ֆինանսական ծախսերի և չվճարված պարտավորության նվազեցման միջև: Ֆինանսական ծախսը բաշխվում է վարձակալության գործողության ժամկետի յուրաքանչյուր ժամանակաշրջանին, ինչը թույլ է տալիս ապահովել հաստատուն պարբերական տոկոսադրույք պարտավորության մնացորդի գծով: Պայմանական վարձակալական վճարները հաշվառվում են՝ վերանայելով նվազագույն վարձակալական վճարները վարձակալության գործողության մնացած ժամկետի ընթացքում, երբ հաստատվել է վարձակալության գծով ճշգրտումը:

(ղ) Ֆինանսական եկամուտ և ծախսեր

Ֆինանսական եկամուտը ներառում է ներդրումներից ստացվելիք եկամուտը (ներառյալ վաճառքի համար մատչելի ակտիվները), շահաբաժիններից ստացվելիք եկամուտը, վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների օտարումից ստացված օգուտը, իրական արժեքով չափվող ներդրումների, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, իրական արժեքի փոփոխությունները և փոխարժեքային տարբերություններից ստացված օգուտը: Տոկոսային եկամուտը ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում է հաշվեգրվելուն պես՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Շահաբաժիններից ստացված եկամուտը ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում է այն պահին, երբ հաստատվում է վճարումը ստանալու Խմբի իրավունքը:

Ֆինանսական ծախսերը ներառում են փոխառությունների գծով տոկոսային ծախսերը, պահուստների գծով զեղչի վերականգնումը, փոխարժեքային տարբերություններից առաջացած վնասը, իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, իրական արժեքի փոփոխությունները և ֆինանսական ակտիվների գծով ճանաչված արժեզրկումից կորուստները: Փոխառության գծով բոլոր ծախսերը ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, բացառությամբ որակավորված ակտիվներին վերաբերող փոխառության ծախսումների, որոնք ճանաչվում են որպես տվյալ ակտիվների սկզբնական արժեքի մի մաս:

Փոխարժեքային տարբերություններից ստացված շահույթը և վնասը ներկայացվում են գուտ հիմունքով:

(ճ) Շահութահարկի գծով ծախս

Հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված տարրերին, որի դեպքում շահութահարկը ճանաչվում է սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը տարվա հարկվող շահույթի գծով ակնկալվող վճարման ենթակա հարկի գումարն է, որը հաշվարկվում է կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ և ներառում է նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են օգտագործելով հաշվեկշռային պարտավորության մեթոդը՝ հիմնվելով ֆինանսական հաշվետվությունների նպատակով օգտագործվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակով օգտագործվող գումարների ժամանակավոր տարբերությունների վրա: Հետաձգված հարկը չի ճանաչվում հետևյալ ժամանակավոր տարբերությունների համար՝ ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչում այն գործարքում, որը չի հանդիսանում ձեռնարկատիրական գործունեության միավորում և որը ազդեցություն չունի հաշվապահական կամ հարկվող շահույթի վրա, ինչպես նաև դուստր ընկերություններում և համատեղ վերահսկվող կազմակերպություններում կատարած ներդրումներին վերաբերող տարբերությունների համար այնքանով, որքանով հավանական է, որ դրանք չեն հակադարձվի մոտ ապագայում: Ի լրումն, հետաձգված հարկը չի ճանաչվում գույքի սկզբնական ճանաչման հետևանքով առաջացած ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկի գումարը չափվում է կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների հանդեպ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքների դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ: Հետաձգված հարկային ակտիվները և հետաձգված հարկային պարտավորությունները հաշվանցվում են, եթե Խումբն ունի ընթացիկ հարկային ակտիվներն ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և հետաձգված հարկային ակտիվներն ու հետաձգված հարկային պարտավորությունները վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից նույն հարկատուից կամ տարբեր հարկատուներից, սակայն Խումբը մտադիր է հարկային պարտավորությունները մարել և հարկային ակտիվներն իրացնել գուտ հիմունքով կամ միաժամանակ իրացնել հարկային ակտիվները և մարել հարկային պարտավորությունները:

Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները: Հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում են այնքանով, որքանով հավանական չէ, որ հարկային օգուտը կիրացվի:

(մ) Մեզմենտային տեղեկատվություն

Խմբի գործունեությունն ընդգրկում է հիմնականում մեկ գործարար սեզմենտ՝ սև պղնձի գտարկում: Սև պղնձը վաճառվում է Գերմանիայում գտնվող մեկ հաճախորդի: Սույն համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները տրամադրում են համապատասխան տեղեկատվություն՝ Ընկերության կողմից ծավալված գործարար գործունեության բնույթը և ֆինանսական հետևանքները և տնտեսական միջավայրը գնահատելու համար:

(յ) Համեմատական տեղեկատվություն

Տարվա ընթացքում ղեկավարությունը բացահայտեց, որ հետաձգված հարկային պարտավորության գումարը ոչ ճշգրիտ է հաշվարկվել: Միասնեքն ուղղվել են և համեմատական տեղեկատվությունը վերահաշվարկվել է: Վերահաշվարկի արդյունքում՝

- 2005թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հետաձգված հարկային պարտավորությունը աճել է 210,605 հազար դրամով, ինչը ներառվել է 2006թ. հունվարի 1-ի դրությամբ հետաձգված հարկային պարտավորության սկզբնական մնացորդի գծով ճշգրտումում, իսկ 2006թ. հունվարի 1-ի դրությամբ կուտակված շահույթի գծով կատարած համապատասխան ճշգրտումը կազմել է 210,605 հազար դրամ:
- 2007թ. հունվարի 1-ի դրությամբ վերագնահատման պահուստը նվազել է 356,102 հազար դրամով, ինչը ներառվել է 2007թ. հունվարի 1-ի դրությամբ վերագնահատման պահուստի սկզբնական մնացորդի գծով ճշգրտումում, իսկ 2007թ. հունվարի 1-ի դրությամբ հետաձգված հարկային պարտավորության գծով համապատասխան ճշգրտումը կազմել է 356,102 հազար դրամ:
- 2006թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա գուտ շահույթն աճել է 24,150 հազար դրամով, ինչը ներառվել է 2007թ. հունվարի 1-ի դրությամբ կուտակված շահույթի սկզբնական մնացորդի գծով ճշգրտումում, իսկ 2007թ. հունվարի 1-ի դրությամբ հետաձգված հարկային պարտավորության գծով համապատասխան ճշգրտումը կազմել է 24,150 հազար դրամ:

(ն) Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության ներկայացման փոփոխություններ

Ընկերությունը թողարկել է պարտատոմսեր տարվա ընթացքում և ՀՀ կենտրոնական բանկ պետք է ներկայացնի Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվություններ: Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտները (ՀՀՀՀՄ) պահանջում են, որպեսզի ֆինանսական հաշվետվությունները պատրաստվեն կիրառելով ուղղակի մեթոդը՝ դրամական միջոցների հոսքերի հաշվետվությունում: Հիմք ընդունելով վերը նշվածը՝ ղեկավարություն փոխել է դրամական միջոցների հոսքերի ներկայացումը ուղղակի մեթոդի՝ ՖՀՄՄ և ՀՀՀՀՄ համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվությունների միջև հետևողականությունն ապահովելու նպատակով:

(2) Դեռևս չընդունված նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Մի շարք նոր ստանդարտներ, այդ ստանդարտների փոփոխություններ և մեկնաբանություններ չեին գործում 2007թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և չեն կիրառվել այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս: Այդ ստանդարտներից և փոփոխություններից ստորև ներկայացվածներն ազդեցություն կունենան Խմբի գործունեության վրա: Խումբը մտադիր է ընդունել այդ ստանդարտները և դրանց փոփոխությունները, երբ վերջիններս մտնեն ուժի մեջ:

- ՖՀՄՄ 8 «Գործառնական սեզմենտներ» ստանդարտը ներկայացնում է «ղեկավարության մոտեցումը» սեզմենտային հաշվետվություններին: ՖՀՄՄ 8 «Գործառնական սեզմենտներ» ստանդարտը, որը պարտադիր կդառնա Խմբի 2009 ֆինանսական տարվա հաշվետվությունների համար, կպահանջի սեզմենտների վերաբերյալ տեղեկատվության բացահայտում, ելնելով Խմբի գործառնական որոշումների համար պատասխանատու անձի կողմից կանոնավոր կերպով ուսումնասիրվող ներքին հաշվետվություններից՝ յուրաքանչյուր սեզմենտում գործունեության արդյունքները գնահատելու և համապատասխան ռեսուրսները բաշխելու նպատակով: Գործարար և աշխարհագրական սեզմենտային տեղեկատվությունը

ներկայացված է ծանոթագրություն 3(մ)-ում: Ղեկավարության մոտեցման համաձայն Խումբը պետք է ներկայացնի սեզմենտային տեղեկատվություն միայն սև պղնձի գտարկման հետ կապված:

4 Իրական արժեքի որոշում

Խմբի հաշվապահական հաշվառման մի շարք դրույթներ և բացահայտումներ պահանջում են իրական արժեքի որոշում ինչպես ֆինանսական, այնպես էլ՝ ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների համար: Իրական արժեքները որոշվել են չափման և/կամ բացահայտման նպատակով՝ հիմք ընդունելով ստորև ներկայացված մեթոդները: Կիրառելիության դեպքում, իրական արժեքների որոշման ժամանակ կատարած ենթադրությունների մասին լրացուցիչ տեղեկատվությունը բացահայտվում է ակտիվին կամ պարտավորությանը վերաբերող ծանոթագրությունում:

(ա) Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցների իրական արժեքը որոշվում է կանոնավոր վերագնահատումների միջոցով: Շարժական հիմնական միջոցների և հողի իրական արժեքը որոշվում է շուկայական արժեքի հիման վրա: Շարժական հիմնական միջոցների իրական արժեքի որոշման համար կիրառվում է փոխարինման ամորտիզացման արժեքի մեթոդը: Բացի փոխարինման ամորտիզացված արժեքի որոշման, իրականացվել է նաև դրամական միջոցների հոսքերի վերլուծություն՝ այս արժեքների հիմնավորվածությունը գնահատելու նպատակով:

(բ) Ներդրումային գույք

Ներդրումային գույքի իրական արժեքը որոշվում է շուկայական արժեքի հիման վրա:

(գ) Այլ ներդրումներ

Սեփական կապիտալի արժեթղթերում վաճառքի համար մատչելի ներդրումների իրական արժեքն իրենից ներկայացնում է սկզբնական արժեքը՝ հանած արժեզրկումից կորուստները, քանի որ այս արժեթղթերը գնանշված չեն և դրանց իրական արժեքը հնարավոր չէ արժանահավատորեն գնահատել այլ մեթոդներով:

Այլ դեպքերում իրական արժեքը որոշվում է հիմք ընդունելով շուկայական արժեքը հաշվետու ամսաթվի դրությամբ կամ զեղչելով դրամական միջոցների համապատասխան հոսքերը՝ օգտագործելով նմանատիպ պայմաններով գործիքի հանդեպ կիրառելի շուկայական դրույթները: Հիմնվելով այս գործողությունների արդյունքների վրա՝ ղեկավարությունը գտնում է, որ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը մոտավորապես հավասար է դրանց հաշվեկշռային արժեքին:

(դ) Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր

Առևտրական և այլ դեբիտորական պարտքերի իրական արժեքը, բացառությամբ անավարտ շինարարության, գնահատվում է որպես հաշվետու ամսաթվի դրությամբ գործող շուկայական տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ապագա հոսքերի ներկա արժեք: Ենթադրվում է, որ առևտրական և այլ դեբիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը մոտավորապես պետք է հավասար լինի դրանց իրական արժեքին՝ կարճաժամկետ լինելու պատճառով:

Առևտրական դեբիտորական պարտքերում ներառված պարունակվող ածանցյալ գործիքների իրական արժեքը որոշվում է կիրառելով մետաղի շուկաներում հաշվետու ամսաթվի դրությամբ գնանշված ֆորվարդային գները:

(ե) Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ

Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների իրական արժեքը հաշվարկվում է հիմք ընդունելով մայր գումարի և տոկոսագումարների գծով դրամական միջոցների ապագա հոսքերի ներկա արժեքը՝ գեղջված հաշվետու ամսաթվի դրությամբ գործող շուկայական տոկոսադրույքով:

5 Ֆինանսական ռիսկերի կառավարում

(ա) Ամփոփ ներկայացում

Ֆինանսական գործիքներն օգտագործելիս Խումբն ենթարկում է հետևյալ ռիսկերին.

- վարկային ռիսկ
- իրադրվելիության ռիսկ
- շուկայական ռիսկ

Սույն ծանոթագրությունում ներկայացված է տեղեկատվություն վերը նշված յուրաքանչյուր ռիսկին Խմբի ենթարկվածության մասին, ինչպես նաև ռիսկերի չափման և կառավարման հետ կապված Խմբի նպատակները, քաղաքականությունը և գործընթացները:

Ընկերությունում մշակված է Ռիսկերի կարավարման քաղաքականություն, որը նպատակ ունի ապահովել երկարաժամկետ հատվածում ընկերության կենսունակությունը և գործունեության առավելագույն արդյունավետությունը: Նշված քաղաքականությունը քննարկվել է Ընկերության գործադիր մարմնի ու ընկերության կառավարման այլ օղակների կողմից:

Քաղաքականության առջև սահմանված նպատակին հասնելու ճանապարհին նախատեսվում է լուծել ռիսկերի կառավարմանը նպաստող համակարգերը սահմանելու, ռիսկերն ըստ առաջնահերթության դասակարգելու, ռիսկերը կառավարելու պատասխանատվությունը հստակեցնելու, ռիսկերի վերաբերյալ տեղեկատվության հաղորդումը կանոնակարգելու, ինչպես նաև համակարգի արդյունավետության ապահովման գործողությունների իրագործման խնդիրները: Առաջիկայում նախատեսվում է նշված քաղաքականությունը հաստատել Ընկերության Բաժնետերերի խորհրդի կողմից:

(բ) Վարկային ռիսկ

Վարկային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, ֆինանսական գործիքի կիրառության մյուս կողմը չկարողանա կատարել իր պայմանագրային պարտավորությունները: Այն հիմնականում առաջանում է Ընկերության դեբիտորական պարտքերի առնչությամբ:

(i) Առևտրական դեբիտորական պարտքեր

Ընկերության և գնորդների հետ հարաբերություններում դեբիտորական պարտքերի առնչությամբ հնարավոր ռիսկերը կառավարելու նպատակով կիրառվում են անհատական մոտեցումներ: Խումբն ունի իր արտադրանքի հիմնական գնորդ, որը եվրոպական շուկաներում խոշորագույն մետալուրգիական գործունեությամբ զբաղվող կազմակերպություն է: Վերջին երեք տարիների ընթացքում նշված գնորդին է իրացվում տարեկան արտադրանքի ավելի քան 90%-ը: Այս առևտրային գործընկերոջ հետ հարաբերություններում Խումբը ստանում է

առաքված արտադրանքի արժեքի 95%-ի չափով սկզբնական վճար առաքումից 4-5 օր հետո: Առաքված արտադրանքի արժեքի մնացած 5%-ը Խումբը ստանում է ապրանքը գնորդին հասցնելուց անմիջապես հետո: Երբ Խմբի կողմից որոշումներ են կայացվում արտադրանքն այլ գնորդների վաճառելու վերաբերյալ, ապա, որպես կանոն, առաքումը կատարվում է վաճառվող արտադրանքի ամբողջ արժեքի չափով կանխավճարի դիմաց: Հետևաբար, հիմնական արտադրանքի գծով Խմբի գործունեության ընթացքում դեբիտորական պարտքերին առնչվող էական ֆինանսական ռիսկեր չեն առաջանում:

(գ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության հետ կապված ռիսկն այն ռիսկն է, որ Խումբը չի կարողանա կատարել իր ֆինանսական պարտավորությունները, երբ վերջիններս դառնան պարտադիր կատարման ենթակա: Այս հարցում Խմբի մոտեցումը կայանում է նրանում, որպեսզի բնականոն կամ արտակարգ իրավիճակներում առաջացող ֆինանսական պարտավորությունները հնարավոր լինի կատարել առանց անընդունելի ֆինանսական կորուստների կամ Խմբի բարի համբավը վտանգելու:

Նշված նպատակով Խումբը կատարում է դրամական հոսքերի կարճաժամկետ կանխատեսումներ՝ ելնելով ընկերության գործառնական և ներդրումային գործունեության բնույթով պայմանավորված ֆինանսական կարիքներից: Սովորաբար նշված կարիքները կանխատեսվում են տարեկան և ամսական կտրվածքով: Առաջացող ֆինանսական կարիքների կառավարման նպատակով Խումբը փոխկապակցված մյուս ընկերությունների հետ ունի փոխադարձ փոխառություններ տրամադրելու պայմանագրեր, որոնք թույլ են տալիս առանց ժամանակային դժվարությունների ֆինանսավորել Խմբի կարճաժամկետ ֆինանսական կարիքները:

Բացի Խմբի մյուս ընկերությունների հետ փոխադարձ փոխառություններ տրամադրելու պայմանագրերի, Խումբը կիրառում է նաև բանկային վարկային գծերի միջոցով ֆինանսավորելու պրակտիկա:

(դ) Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկերը Խմբում կիրառվող պրակտիկայում դիտարկվում են շուկայական գների, արտարժույթի և տոկոսադրույքների փոփոխության հետևանքով Խմբի եկամուտների կամ արժեքի վրա հնարավոր ազդեցության ռիսկերը: Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն են, որոնք թույլ կտան պահպանել այս ռիսկին ենթարկվածության աստիճանը ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

(ii) Արժուքային ռիսկ

Խումբն իր գործառնական գործունեության ֆունկցիոնալ արժույթից (հայկական դրամ) տարբերվող արժույթներով ռիսկերի հանդիպում է իր արտադրանքի իրացման, հումքի ձեռքբերման և փոխառություններ վերցնելու առնչությամբ: Երբ հնարավոր է՝ գործառնական նպատակներով կատարվող ձեռքբերումների դիմաց վճարումներն իրականացվում են այն արժույթով, որով ստացվում են Խմբի պատրաստի արտադրանքի դիմաց եկամուտները (համապատասխանաբար, այդ իրավունքները ամրագրվում են պայմանագրերով): Դա, մասնավորապես վերաբերում է հիմնական հումքի դիմաց վճարումներին, որի գծով, ինչպես վերը նշվեց, ձեռքբերումների ծախսերը կազմում են Խմբի բոլոր ծախսերի ավելի քան 85%-ը: Արժուքային ռիսկերը նվազեցնելու մյուս մոտեցումը Խմբի կողմից վարկերի ստացումն է այն արժույթով, որով իրացվում է Խմբի արտադրանքը (ներկայումս՝ ԱՄՆ դոլարը): 2007թ. վերջի դրությամբ Խմբի ֆինանսական պարտավորությունների գերակշիռ մասը արտահայտված է եղել նույն արժույթով:

(iii) Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքների փոփոխության առնչությամբ հնարավոր ռիսկերը մեղմելու նպատակով Ընկերությունը կիրառում է ինչպես հաստատուն, այնպես էլ լողացող տոկոսադրույքներով վարկերի ստացման պրակտիկա: Չնայած դեռևս այդ մասով Ընկերության գործողությունները կանոնակարգելու առանձնահատուկ քաղաքականություն մշակված չէ, սակայն պրակտիկայում նշված երկու մոտեցումների գուգակցումը կարող է որոշ չափով զսպել տոկոսադրույքների տատանումների առնչությամբ առաջացող ռիսկերը: 2007թ. ընթացքում Ընկերության կողմից ներգրավված վարկերի կառուցվածքում եղել են ինչպես հաստատուն, այնպես էլ լողացող տոկոսադրույքով վարկեր:

(iv) Գնային ռիսկ

Խմբի արտադրանքի գնորոշումը կատարվում է միջազգային շուկաներում որևէ կոնկրետ պահի դրությամբ սահմանված գներով: Ընդ որում, հիմնական հումքի ձեռքբերման պահից մինչև պատրաստի արտադրանքի իրացումը կարող է կազմել 3-4 ամիս: Նշված ռիսկերը կառավարելու նպատակով Խումբը սահմանում է գնորոշման ժամանակաշրջան իր արտադրանքի իրացման և հումքի ձեռք բերման համար այնպես, որպեսզի վաճառքի ճանաչման պահը համապատասխանի գնված խտանյութի գնորոշման ժամանակաշրջանի հետ: Այդ եղանակով Խումբն ըստ էության մասնակիորեն չեզոքացնում է գնային ռիսկերը:

6 Հասույթ

	2007թ. հազ. դրամ	2006թ. հազ. դրամ
Հասույթ ապրանքների իրացումից	24,133,328	30,876,990
Հասույթ ծառայությունների մատուցումից	51,160	84,133
Այլ հասույթ	69,273	126,544
	24,253,761	31,087,667

2007թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունն ուներ 7,288,642 հազար դրամ (2006թ-ին՝ 4,470,867 հազար դրամ) գումարով պայմանականորեն գնանաշված իրացում, որը բաղկացած էր 2,468 (2006թ-ին՝ 1,421) չոր մետրիկ տոննա սև պղնձից, որի իրական արժեքը կազմում էր 7,142,816 հազար դրամ (2006թ-ին՝ 4,314,214 հազար դրամ)՝ ներառյալ պարունակվող ածանցյալ գործիքը:

Սև պղնձին վերաբերող պարունակվող ածանցյալ գործիքի իրական արժեքը հաշվարկվել է օգտագործելով մետաղների շուկայում հաշվետու ամսաթվի դրությամբ գնանշված ֆորվարդային գները:

7 Վաճառքի ինքնարժեք

	2007թ. հազ. դրամ	2006թ. հազ. դրամ
Գնված պղնձի խտանյութ	15,813,128	23,690,121
Աշխատանք և աշխատավարձ	591,827	250,154
Մաշվածություն և ամորտիզացիա	277,913	93,168
Այլ	1,630,488	2,372,333
	18,313,356	26,405,776

8 Այլ եկամուտ

	2007թ. հազ. դրամ	2006թ. հազ. դրամ
Եկամուտ գործառնական վարձակալությունից	9,495	18,266
Կառավարության շնորհներ	1,579	-
(Վնաս)/շահույթ հիմնական միջոցների օտարումից	(421)	2,281
Այլ եկամուտ	21,724	24,394
	32,377	44,941

9 Իրացման ծախսեր

	2007թ. հազ. դրամ	2006թ. հազ. դրամ
Փոխադրման ծախսեր	159,728	282,042
Մաքսային տուրքեր ապրանքների գծով	14,352	14,891
Շուկայավարման և գովազդի ծախսեր	-	10,574
Այլ իրացման ծախսեր	11,745	16,770
	185,825	324,277

10 Վարչական ծախսեր

	2007թ. հազ. դրամ	2006թ. հազ. դրամ
Աշխատավարձի գծով ծախսեր	377,575	347,696
Մաշվածություն	92,928	62,677
Պահպանման ծախսեր	81,513	98,016
Բանկային ծառայությունների վճարներ	69,519	97,605
Հարկեր, բացառությամբ շահութահարկի	66,623	361,204
Կոմունալ և հաղորդակցության ծախսեր	51,920	55,470
Ներկայացուցչական և գործուղման ծախսեր	15,685	31,227
Աուդիտի և խորհրդատվական ծառայությունների վարձավճարներ	12,248	28,527
Տույժեր և տուգանքներ	4,377	36,876
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	-	1,258
Այլ	258,987	259,072
	1,031,375	1,379,628

2007թ-ին աշխատակիցների միջին թիվը կազմում էր 1,008 (2006թ-ին՝ 874): 2007թ-ին աշխատակազմի գծով ընդհանուր ծախսերը (արտադրամասեր և վարչական բաժին) կազմում էին 1,480,451 հազար դրամ (2006թ-ին՝ 1,074,797 հազար դրամ): Աշխատավարձի գծով ծախսերը ներառում են 34,905 հազար դրամ գումարով սոցիալական ապահովագրության պարտադիր վճարները (2006թ-ին՝ 43,762 հազար դրամ):

11 Արժեզրկում

	2007թ. հազ. դրամ	2006թ. հազ. դրամ
Պաշարներ (ծանոթագրություն 21)	10,197	(89,858)
Հանքաարդյունաբերական գույքի արժեզրկում (ծանոթագրություն 18)	-	404,621
Հիմնական միջոցների արժեզրկման հակադրածում (ծանոթագրություն 15)	-	203,066
Ստացվելիք ԱԱՀ (ծանոթագրություն 22)	-	(544,426)
	10,197	(26,597)

12 Այլ ծախսեր

	2007թ. հազ. դրամ	2006թ. հազ. դրամ
Հետագրուման ծախսեր	208,641	64,685
Հիմնական միջոցների վերագնահատման նվազում	-	268,984
Այլ ծախսեր	22,068	37,338
	230,709	371,007

13 Ֆինանսական եկամուտ և ծախսեր

	2007թ. հազ. դրամ	2006թ. հազ. դրամ
Ֆինանսական եկամուտ		
Ջուտ շահույթ փոխարժեքային տարբերություններից	213,743	768,985
Տոկոսայի եկամուտ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով	225	-
Ֆինանսական ծախսեր		
Տոկոսայի ծախս ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունների գծով	(173,479)	(355,886)
Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված զուտ ֆինանսական ծախս	40,489	413,099

14 Շահութահարկի գծով ծախս

	2007թ. հազ. դրամ	2006թ. հազ. դրամ
<i>Ընթացիկ հարկի գծով ծախս</i>		Վերահաշվարկված
Ընթացիկ տարի	386,559	119,570
Նախորդ ժամանակաշրջանի ճշգրտում	-	(2,903)
	386,559	116,667
<i>Հետաձգված հարկի գծով ծախս</i>		
Ժամանակավոր տարբերությունների առաջացում և հակադարձում	49,945	169,002
	436,504	285,669

Մինչև 2008 ֆինանսական տարվա վերջը Ընկերությունը պարտավոր է շահութահարկը վճարել հարկային օրենսդրությամբ սահմանված դրույքի 50%-ի չափով: 2007թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հարկի օրենսդրությամբ սահմանված դրույքը կազմում էր 20% (2006թ-ին՝ 20%):

Արդյունավետ հարկային դրույքի համադրում

	2007թ.		2006թ.	
	հազ. դրամ	%	հազ. դրամ Վերահաշվարկվ.	%
Շահույթ մինչև հարկումը	4,575,559	100.0	3,038,422	100.0
Շահութահարկ հաշվարկված կիրառելի հարկային դրույքով	457,556	10.0	303,842	10.0
(Ցածր)/բարձր դրույքով հարկված շահույթի հետևանքները	(13,546)	(0.3)	(24,150)	(0.8)
Չնվազեցվող/չհարկվող հոդվածներ	(7,506)	(0.2)	8,880	0.3
Նախորդ ժամանակաշրջանի ճշգրտում	-	-	(2,903)	(0.1)
	<u>436,504</u>	<u>9.5</u>	<u>285,669</u>	<u>9.4</u>

15 Հիմնական միջոցներ

հազ. դրամ	Հող և շենքեր	Կապ. ներդրումներ վարձակալվ. միջոցներում	Մեքենա-սարքավ.	Տրանսպ. միջոցներ	Տնտեսակ. գույք	Անավարտ շինարարութ.	Ընդամենը
Սկզբնական արժեք/Վերագնահատվ. արժեք							
Առ 1 հունվարի 2006թ.	2,470,330	70,216	2,267,672	84,335	163,820	555,748	5,612,121
Ավելացումներ	146,138	998	533,626	92,056	11,254	169,707	953,779
Օտարումներ	(2,223)	-	(32,256)	(2,110)	(2,979)	-	(39,568)
Վերագնահատում	924,269	-	1,748,262	278,931	10,929	-	2,962,391
Վերադասակարգումներ	(15,578)	-	13,081	2,204	(36,264)	-	(36,557)
Առ 31 դեկտեմբերի 2006թ.	3,522,936	71,214	4,530,385	455,416	146,760	725,455	9,452,166
Ավելացումներ	66,517	-	690,759	44,162	7,553	138,542	947,533
Օտարումներ	(2,529)	-	(3,826)	-	(1,167)	(6,785)	(14,307)
Վերադասակարգումներ	213,200	-	(350,721)	2,195	42,825	92,501	-
Առ 31 դեկտեմբերի 2007թ.	3,800,124	71,214	4,866,597	501,773	195,971	949,713	10,385,392
Մաշվածություն և արժեզրկումից կորուստներ							
Առ 1 հունվարի 2006թ.	188,368	19,675	463,456	13,800	92,401	-	777,700
Տարվա ծախս	37,323	3,536	115,303	12,402	24,376	-	192,940
Արժեզրկումից կորուստներ – հակադարձում	-	-	(203,066)	-	-	-	(203,066)
Օտարումներ	(219)	-	(5,731)	(822)	(2,432)	-	(9,204)
Վերագնահատում	(207,945)	-	(404,324)	(25,318)	(97,248)	-	(734,835)
Վերադասակարգումներ	(17,527)	-	34,362	(62)	(17,097)	-	(324)
Առ 31 դեկտեմբերի 2006թ.	-	23,211	-	-	-	-	23,211
Տարվա ծախս	70,282	3,560	303,616	46,008	30,711	-	454,177
Օտարումներ	(8)	-	(125)	-	(63)	-	(196)
Վերադասակարգումներ	-	-	-	-	-	-	-
Առ 31 դեկտեմբերի 2007թ.	70,274	26,771	303,491	46,008	30,648	-	477,192
Չուտ հաշվեկշռային արժեք							
Առ 1 հունվարի 2006թ.	2,281,962	50,541	1,804,216	70,535	71,419	555,748	4,834,421
Առ 31 դեկտեմբերի 2006թ.	3,522,936	48,003	4,530,385	455,416	146,760	725,455	9,428,955
Առ 31 դեկտեմբերի 2007թ.	3,729,850	44,443	4,563,106	455,765	165,323	949,713	9,908,200
Չուտ հաշվեկշռային արժեք, եթե վերագնահատում չիրականացվեր							
Առ 1 հունվարի 2006թ.	272,045	50,541	998,525	62,912	91,404	584,997	2,060,424
Առ 31 դեկտեմբերի 2006թ.	396,535	48,003	1,289,056	145,653	65,367	754,705	2,699,319
Առ 31 դեկտեմբերի 2007թ.	445,151	44,443	1,750,537	175,105	73,762	957,183	3,446,181

298,111 հազար դրամ գումարով մաշվածության ծախսը գրանցվել էր վաճառված ապրանքների ինքնարժեքի կազմում, 63,138 հազար դրամը՝ հիմնական միջոցների և հանքաարդյունաբերական գույքի գծով կապիտալ ծախսումների կազմում և 92,928 հազար դրամը՝ վարչական ծախսերի կազմում:

(ա) Վերագնահատում

Հիմնական միջոցների վերագնահատումն իրականացվել է 2006թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ լիցենզավորված գնահատող՝ «Արթին Էնթրփրայզ» ՓԲԸ-ի կողմից: Շարժական հիմնական միջոցները և հողը վերագնահատվել են շուկայական արժեքների հիման վրա, ոչ շարժական հիմնական միջոցները գնահատվել են փոխարինման ամորտիզացված արժեքով:

Այս մեթոդը դիտարկում է հիմնական միջոցների վերարտադրման կամ փոխարինման ծախսերը՝ հաշվի առնելով ֆիզիկական, ֆունկցիոնալ կամ տնտեսական մաշվածության և հնության գծով ճշգրտումը:

Փոխարինման ամորտիզացված արժեքը գնահատվել է նմանատիպ հիմնական միջոցների ներքին աղբյուրներից և Հայաստանի ու միջազգային համապատասխան շուկաներում կատարած վերծրություններից ստացված տվյալների հիման վրա: Շուկայի վերաբերյալ տարբեր տվյալները ստացվել են հրապարակված տեղեկատվությունից, կատալոգներից, վիճակագրական տվյալներից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության և արտերկրի տվյալ ոլորտի մասնագետներից և հիմնական միջոցների մատակարարներից:

Բացի փոխարինման ամորտիզացված արժեքի որոշման, իրականացվել է նաև դրամական միջոցների հոսքերի վերլուծություն՝ այս արժեքների հիմնավորվածությունը գնահատելու նպատակով:

Վերագնահատման արդյունքում 2006թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը ավելացավ 3,697,226 հազար դրամով: Սեփական կապիտալում ճանաչվեց 3,213,489 հազար դրամ գումարով վերագնահատման գուտ աճ (առանց 752,723 հազար դրամ գումարով հետաձգված հարկի ազդեցության (տես՝ ծանոթագրություն 3 (յ)), իսկ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվեց 268,984 հազար դրամ գումարով վերագնահատման նվազում:

16 Ոչ նյութական ակտիվներ

	հազ. դրամ
<i>Սկզբնական արժեք</i>	
Առ 1 հունվարի 2006թ. Ավելացումներ	36,577 13,939
Առ 31 դեկտեմբերի 2006թ. Ավելացումներ	50,516 2,500
Առ 31 դեկտեմբերի 2007թ.	53,016
<i>Անորոշագիս</i>	
Առ 1 հունվարի 2006թ. Տարվա ծախս	2,516 1,258
Առ 31 դեկտեմբերի 2006թ. Տարվա ծախս	3,774 -
Առ 31 դեկտեմբերի 2007թ.	3,774
<i>Չուտ հաշվեկշռային արժեք</i>	
Առ 1 հունվարի 2006թ.	34,061
Առ 31 դեկտեմբերի 2006թ.	46,742
Առ 31 դեկտեմբերի 2007թ.	49,242

17 Ներդրումային գույք

	հազ. դրամ
<i>Սկզբնական արժեք</i>	
Առ 1 հունվարի 2006թ. Առ 31 դեկտեմբերի 2006թ. Առ 31 դեկտեմբերի 2007թ.	152,387 152,387 152,387
<i>Մաշվածություն</i>	
Առ 1 հունվարի 2006թ. Տարվա ծախս	1,870 2,039
Առ 31 դեկտեմբերի 2006թ. Տարվա ծախս	3,909 2,869
Առ 31 դեկտեմբերի 2007թ.	6,778
<i>Չուտ հաշվեկշռային արժեք</i>	
Առ 31 դեկտեմբերի 2006թ.	148,478
Առ 31 դեկտեմբերի 2007թ.	145,609

Ներդրումային գույքն իրենից ներկայացնում է հիմնական միջոցներից վերադասակարգված հողը և շենքերը: Որպես ներդրումային գույք վարձով տրված բոլոր շենքերը ձեռք են բերվել: 2004թ-ին: Չեռքբերման ամսաթվից հետո շենքերի իրական արժեքներն էականորեն չեն փոխվել, այդ իսկ պատճառով ներդրումային գույքի իրական արժեքի և սկզբնական արժեքի տարբերությունը զգալի չէ:

18 Հանքաարդյունաբերական գույք

	հազ. դրամ
<i>Սկզբնական արժեք</i>	
Առ 1 հունվարի 2006թ.	509,726
Ավելացումներ	259,736
Առ 31 դեկտեմբերի 2006թ.	769,462
Ավելացումներ	367,805
Առ 31 դեկտեմբերի 2007թ.	1,137,267
 <i>Կուտակված ամորտիզացիա և արժեզրկումից կորուստներ</i>	
Առ 1 հունվարի 2006թ.	509,726
Impairment losses reversal	(404,621)
Առ 31 դեկտեմբերի 2006թ.	105,105
Ժամանակշրջանի ամորտիզացիայի ծախս	87,850
Առ 31 դեկտեմբերի 2007թ.	192,955
 <i>Չուտ հաշվեկշռային արժեք</i>	
Առ 1 հունվարի 2006թ.	-
Առ 31 դեկտեմբերի 2006թ.	664,357
Առ 31 դեկտեմբերի 2007թ.	944,312

2007թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հանքաարդյունաբերական գույքը վերաբերում էր Ալավերդու հանքին: Ըներությունը վերսկսեց հանքանյութի արտահանումը Ալավերդու հանքից 2007թ. սկզբից: Այունուամենայնիվ, 2007թ. վերջում արդյունահանման շավալները նվազեցին, նպատակ ունենալով մշակել այնպիսի նոր տեխնոլոգիաներ, որոնք թույլ կտան արտահանել պղնձի ավելի մեծ պարունակություն ունեցող հանքանյութ: Ընկերությունը պլանավորում է ներդրել հանքանյութի արդյունահանման նոր տոխնոլոգիան 2008թ. երրորդ եռամսյակում: Ընկերության կապիտալի միջին կշռված արժեքով զեղչված հանքանյութի արտահանումից, մշակումից և հետագա վաճառքից ակնկալվող դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի վերլուծությունը վկայում է դրական գուտ ներկա արժեքի մասին 2007թ. վերջում: Ալավերդու հանքից հանքանյութի արտահանման լիցենզիայի ժամկետը լրանում է 2026թ. օգոստոսի 6-ին:

19 Հետազոտման և գնահատման ակտիվներ

	հազ. դրամ
<i>Սկզբնական արժեք</i>	
Առ 1 հունվարի 2006թ.	553,280
Ավելացումներ	938,927
Առ 31 դեկտեմբերի 2006թ.	1,492,207
Ավելացումներ	831,014
Առ 31 դեկտեմբերի 2007թ.	2,323,221

2007թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հետազոտման և գնահատման ակտիվները իրենցինքն ներկայացնում են Հայաստանի հյուսիսում գտնվող Թեղուտի հանքի գծով կատարած ծախսումները: Իր մեծությամբ Թեղուտի հանքը հանդիսանում է պղնձի և մոլիբդենի Հայաստանի երկրորդ հանքը:

Հանքանյութի պաշարների քանակությունները գնահատելիս առկա են մի շարք անորոշություններ՝ ներառյալ Խմբի վերահսկողության ներքո չգտնվող բազմաթիվ գործոններ: Հանքանյութի պաշարների գնահատումները հիմնված են հորանցքների և այլ հանքանցքերի հանքանյութի մմուշներում բաղկացուցչի պարունակության ինժեներական գնահատումների վրա: Ի լրումն, առանձին մետաղների շուկայական արժեքի նվազումը կարող է հանգեցնել նրան, որ միներալիզացիայի ցածր աստիճան ունեցող հանքանյութի որոշ պաշարներ կարող են դիտվել տնտեսապես ոչ նպատակահարմար հանքի հետագա օգտագործման համար: Ավելին, գործունեության իրականացման և բնօգտագործման թույլտվությունների առկայությունը, գործառնական և կապիտալ ծախսերի փոփոխությունները և այլ գործոնները կարող են էական և ոչ բարենպաստ ազդեցություն ունենալ Ընկերության հանքանյութի պաշարների գնահատումների վրա: Ընկերությունը հանքանյութի պաշարների իր գնահատումներն օգտագործում է ակտիվների արժեզրկումը գնահատելիս:

20 Այլ ներդրումներ

	2007թ. հազ. դրամ	2006թ. հազ. դրամ
Վաճառքի համար մատչելի		
Սեփական կապիտալի գործիքներ - չգնանշված		
«Մանես» ԲԲԸ	38,555	38,555
«Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ	26,269	26,269
«Գուգարքի ԳԵՈ» ԲԲԸ	10,000	10,000
«Վալլեքս Այ Թի» ՓԲԸ	5	5
Պարտքային գործիքներ – գնանշված		
Կորպորատիվ պարտատոմսեր («Հայուսգազարդ»)	5,000	-
	79,829	74,829
Արժեզրկման գծով պահուստ	(39,182)	(39,182)
	40,647	35,647

Սեփական կապիտալի չգնանշված ներդրումներ

Սկզբնական արժեքով ներկայացված վաճառքի համար մատչելի ներդրումներն իրենցից ներկայացնում են սեփական կապիտալի չգնանշված արժեթղթեր: Այս ներդրումների համար ակտիվ շուկա չի գործում, և վերջերս չեն իրականացվել այնպիսի գործարքներ, որոնք կտրամադրեին վկայություններ վերջիններիս իրական արժեքի մասին: Ի լրումն, զեղչված դրամական հոսքերի տեխնիկայի կիրառման արդյունքում ի հայտ են գալիս բազմաթիվ իրական արժեքներ՝ պայմանավորված դրամական միջոցների ապագա հոսքերի անորոշությամբ:

Անվանումը	Գրանցման վայրը	Հիմնական գործունեութ.	2007թ. Հաշվեկշռ. արժեք	2006թ. Հաշվեկշռ. արժեք
			հազ. դրամ	հազ. դրամ
«Մանես» ԲԲԸ	Հայաստանի Հանրապետություն	Չուլում	-	-
«Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն	Լեռնամետալուրգ. տեխնոլոգիաների մշակում	26,269	26,269
«Գուգարքի ԳԵՈ» ԲԲԸ	Հայաստանի Հանրապետություն	Հիմ. միջոցների վարձակալությամբ տրամադրում	10,000	10,000
«Վալլեքս Այ Թի» ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն	Համակարգիչների վաճառք	5	5

21 Պաշարներ

	2007թ. հազ. դրամ	2006թ. հազ. դրամ
Հումք	2,673,673	2,605,807
Պատրաստի արտադրանք	367,398	344,309
Անավարտ արտադրություն	122,037	118,394
Այլ պաշարներ	42,448	36,140
	<u>3,205,556</u>	<u>3,104,650</u>
Պահուստ հնացած/դանդաղ շարժ ունեցող պաշարների գծով	(425,033)	(435,230)
	<u><u>2,780,523</u></u>	<u><u>2,669,420</u></u>

Հումքը, անավարտ արտադրությունը և պատրաստի արտադրանքը ներակայացված են սկզբնական արժեքից և իրացման գուտ արժեքից նվազագույնով:

22 Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր

	2007թ. հազ. դրամ	2006թ. հազ. դրամ
Փոխհատուցման ենթակա ԱԱՀ	2,470,468	1,507,636
Առևտրական դեբիտորական պարտքեր	1,642,333	607,042
Կանխավճարներ	2,030,786	249,137
Այլ դեբիտորական պարտքեր	26,807	18,329
	<u>6,170,394</u>	<u>2,382,144</u>
Արժեզրկման պահուստ փոխհատուցման ենթակա ԱԱՀ-ի գծով	(544,426)	(544,426)
	<u><u>5,625,968</u></u>	<u><u>1,837,718</u></u>

Առևտրական դեբիտորական պարտքերի 93% (2006թ-ին՝ 82%) պետք է վճարվի մեկ հաճախորդի կողմից:

Առևտրական և այլ դեբիտորական պարտքերի արժեզրկման գծով պահուստի շարժի վերլուծություն

	2007թ. հազ. դրամ	2006թ. հազ. դրամ
Տարեսկզբի դրությամբ	544,426	-
Պահուստների գուտ աճ	-	544,426
	<u><u>544,426</u></u>	<u><u>544,426</u></u>

Խմբի ենթարկվածությունը վարկային և արտաժութային ռիսկերին, ինչպես նաև առևտրական և այլ դեբիտորական պարտքերին վերաբերող արժեզրկումից կորուստները ներկայացված են ծանոթագրություն 29-ում:

23 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	2007թ. հազ. դրամ	2006թ. հազ. դրամ
Կանխիկը դրամարկղում	1,626	2,406
Ընթացիկ հաշիվներ	139,130	132,607
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում արտացոլված դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	140,756	135,013

Խմբի ենթարկվածությունը տոկոսադրույքի ռիսկին և ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների զգայունության վերլուծությունը ներկայացված են ծանոթագրություն 29-ում:

24 Մեփական կապիտալ

Բաժնետիրական կապիտալ

2007թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հայտարարված բաժնետիրական կապիտալը բաղակազմ էր 5 միլիոն (2006թ-ին՝ 40 միլիոն) սովորական բաժնետոմսից՝ յուրաքանչյուրը 1,000 դրամ արժեքով: 2007թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ թողարկված և ամբողջովին վճարված բաժնետիրական կապիտալը բաղկացած էր 3,069,716 (2007թ-ին՝ 3,069,716) սովորական բաժնետոմսից՝ յուրաքանչյուրը 1,000 դրամ արժեքով:

Շահաբաժիններ

2007թ. և 2006թ. շահաբաժիններ չեն հայտարարվել և չեն վճարվել: 2007թ. դեկտեմբերի 31-ից հետո շահաբաժիններ չեն առաջարկվել:

25 Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

(ա) Ծանաչված հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները կիրառելի են հետևյալ հոդվածների հանդեպ.

հազ. դրամ	Ակտիվներ		Պարտավորություններ		Զուտ	
	Վերահաշվարկվ.		Վերահաշվարկվ.		Վերահաշվարկվ.	
	2007թ.	2006թ.	2007թ.	2006թ.	2007թ.	2006թ.
Հիմնական միջոցներ	(86,300)	(57,043)	1,499,586	1,499,586	1,413,286	1,442,543
Ոչ նյութական ակտիվներ	(4,629)	-	-	-	(4,629)	-
Հետազոտման և գնահատման ակտիվներ	(37,991)	(10,899)	-	-	(37,991)	(10,899)
Այլ ներդրումներ	(7,836)	(7,836)	-	-	(7,836)	(7,836)
Պաշարներ	(70,192)	(70,192)	1,686	667	(68,506)	(69,525)
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	(33,055)	(33,055)	69,302	-	36,247	(33,055)
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	(274,933)	(156,922)	451,285	292,672	176,352	135,750
Զուտ հարկային (ակտիվներ)/ պարտավորություններ	(514,936)	(335,947)	2,021,859	1,792,925	1,506,923	1,456,978

(բ) Ժամանակավոր տարբերությունների շարժը տարվա ընթացքում

հազ. դրամ	Ծանաչված			
	1 հունվարի 2006թ.	ֆին. արդյունքների մասին հաշվետվություն.	Ծանաչված սեփական կապիտալում	31 դեկտեմբերի 2006թ.
	Վերահաշվ.	Վերահաշվարկվ.	Վերահաշվ.	Վերահաշվարկվ.
Հիմնական միջոցներ	726,556	(36,736)	752,723	1,442,543
Հետազոտման և գնահատման ակտիվներ	(45,222)	34,323	-	(10,899)
Այլ ներդրումներ	(7,836)	-	-	(7,836)
Պաշարներ	(60,547)	(8,978)	-	(69,525)
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	78,224	(111,279)	-	(33,055)
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	(155,922)	291,672	-	135,750
	535,253	169,002	752,723	1,456,978

հազ. դրամ	1 հունվարի 2007թ.	ճանաչված ֆին. արդյունքների մասին հաշվետվություն.	31 դեկտեմբերի 2007թ.
Հիմնական միջոցներ	1,442,543	(29,257)	1,413,286
Ոչ նյութական ակտիվներ	-	(4,629)	(4,629)
Հետագոտման և գնահատման ակտիվներ	(10,899)	(27,092)	(37,991)
Այլ ներդրումներ	(7,836)	-	(7,836)
Պաշարներ	(69,525)	1,019	(68,506)
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	(33,055)	69,302	36,247
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	135,750	40,602	176,352
	<u>1,456,978</u>	<u>49,945</u>	<u>1,506,923</u>

Կիրառելի հարկային դրույքը կազմում էր 20% կամ 10%՝ կախված ակտիվի կամ պարտավորության հակադարձման ակնկալվող ժամկետներից (2006թ-ին՝ 20% կամ 10%):

26 Վարկեր և փոխառություններ

Այս ծանոթագրությունում ներկայացված է տեղեկատվություն ամորտիզացված արժեքով չափվող Խմբի վարկերի և փոխառությունների պայմանագրային պայմանների մասին: Տոկոսադրույքի և արտարժույթի ռիսկերին Խմբի ենթարկվածության վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 29-ում:

	2007թ. հազ. դրամ	2006թ. հազ. դրամ
<i>Ոչ ընթացիկ պարտավարություններ</i>		
Գ-րավով ապահովված վարկեր բանկից	1,680,638	-
Գ-րավով չապահովված պարտատոմսերի թողարկում	449,863	-
Վարկ այլ կապակցված կողմերից	-	146,971
	<u>2,130,501</u>	<u>146,971</u>
<i>Ընթացիկ պարտավարություններ</i>		
Վարկ այլ կապակցված կողմերից	396,739	2,395
Գ-րավով ապահովված վարկեր բանկից	144,682	1,650,340
Գ-րավով չապահովված պարտատոմսերի թողարկում	50,137	-
	<u>591,558</u>	<u>1,652,735</u>

Գ-րավով չապահովված պարտատոմսերն իրենցից ներկայացնում են 50 հազար դրամ անվանական արժեքով և 10% տոկոսադրույքով 10 հազար կտրոնային պարտատոմսեր: Կտրոնները ենթակա են վճարման կիսամյակային կտրվածքով, մարման ժամկետը լրանում է 2009թ. մարտին:

Պարտքերի մարման պայմանները և ժամանակացույցը

Ստորև ներկայացված են չմարված վարկերի համար գործող պայմանները:

հազ. դրամ	2007թ.				2006թ.		
	Արժույթ	Անվանակ. տոկոսադր. Ժամկետայն.	Անվանակ. արժեք	Հաշվեկշռ. արժեք	Անվանակ. արժեք	Հաշվեկշռ. արժեք	
Գրավով ապահովված վարկ բանկից	ԱՄՆ դոլար	8.16%	2010	1,825,320	1,825,320	-	-
Գրավով ապահովված վարկ բանկից	ԱՄՆ դոլար	12.35%	2007	-	-	1,636,311	1,650,340
Գրավով չապահովված կտրոնային պարտատոմսեր	ՀՀ դրամ	10.00%	2009	500,000	500,000	-	-
Վարկ այլ կապակցված կողմերից	ՀՀ դրամ	5.00%	Յպահանջ	172,000	193,161	-	-
Վարկ այլ կապակցված կողմերից	ՀՀ դրամ	10.00%	2008	202,791	203,578	-	-
Վարկ այլ կապակցված կողմերից	ՀՀ դրամ	10.00%	2008	-	-	146,971	149,366
				2,700,111	2,722,059	1,783,282	1,799,706

Բանկից ստացված գրավով ապահովված վարկերի հանդեպ կիրառվում է տարեկան 9.7% արդյունավետ տոկոսադրույք (2006թ-ին՝ 11.9%): Բանկից ստացված վարկերի հանդեպ կիրառվում է LIBOR-ի հետ կապակցված լողացող տոկոսադրույք: Ընկերությունը պետք է սկսի գրավով ապահովված բանկից ստացված վարկի մարումը 2009թ. հունվարի 5-ից՝ 24 հավասար ամսական մասնաբաժիններով:

Ընկերությունը բանկին է տրամադրել հետևյալ երաշխիքները.

- գրավադրվել է Ընկերության բանկային հաշվի գումարը, որի միջոցով փոխանցվում են սև պղնձի վաճառքից ստացված հասույթը:
- 2006թ. դեկտեմբերի 8-ին հիմնական պատվիրատուի՝ Norddeutsche Affinerie AG հետ ստորագրված վաճառքի պայմանագրով Ընկերությանը տրված բոլոր իրավունքները և օգուտները շրջանականերում:
- Փոխառության ողջ ժամկետի ընթացքում Ընկերությունը պետք է ապահովի հետևյալը.
 - վաճառքի պայմանագրի շրջանակներում պատվիրատուին առաքման ենթակա ապրանքների գումարը չպետք է պակաս լինի մարման ենթակա վարկի 125%-ը:
 - վաճառքի պայմանագրով նախատեսված ամսական շրջանառությունը չպետք է պակաս լինի ամսական կտրվածքով վճարման ենթակա մայր գումարի և տոկոսագումարի հանրագումարի 125%-ից:

27 Կառավարության շնորհներ

	2007թ. հազ. դրամ	2006թ. հազ. դրամ
Կառավարության շնորհներ	78,972	78,973
Ճանաչված եկամուտ	(1,579)	-
	<u>77,393</u>	<u>78,973</u>

28 Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր

	2007թ. հազ. դրամ	2006թ. հազ. դրամ
Առևտրական կրեդիտորական պարտքեր	1,137,198	884,922
Այլ կրեդիտորական պարտքեր	148,281	174,399
Այլ վճարվելիք հարկեր	61,925	102,887
Ստացված կանխավճարներ	73,702	89,874
	<u>1,421,106</u>	<u>1,252,082</u>

Խմբի ենթարկվածությունը առևտրական և այլ կրեդիտորական պարտքերին վերաբերող արտարժույթի և իրացվելիության ռիսկերին ներկայացված է ծանոթագրություն 29-ում:

29 Ֆինանսական գործիքներ

(ա) Վարկային ռիսկ

Ենթարկվածությունը վարկային ռիսկին

Ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը ներկայացնում է առավելագույն ենթարկվածությունը վարկային ռիսկին: Ստորև ներկայացված է վարկային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը հաշվետու ամսաթվի դրությամբ:

հազ. դրամ	Հաշվեկշռային արժեք	
	2007թ.	2006թ.
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	40,647	35,647
Առևտրական դեբիտորական պարտքեր	1,642,333	607,042
	<u>1,682,980</u>	<u>642,689</u>

Ի լրումն վերը նշված ռիսկին ենթարկվածությանը, Ըներությունն ենթարկված է նաև ապրանքների գծով կանխավճարների հետ կապված ռիսկին, որոնք ներառված են առևտրական և այլ դեբիտորական պարտքերի կազմում և 2007թ. դեկտեմբերի 31-ի և 2006թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել են համապատասխանաբար 2,030,786 հազար դրամ և 249,137 հազար դրամ:

Ստորև ներկայացված է հաշվետու ամսաթվի դրությամբ առավելագույն ենթարկվածությունը վարկային ռիսկին առևտրական դեբիտորական պարտքերի կտրվածքով՝ ըստ աշխարհագրական գոտիների:

հազ. դրամ	Հաշվեկշռային արժեք	
	2007թ.	2006թ.
Եվրոյի գոտու երկրներ	1,532,217	538,227
Տեղական	110,116	68,815
	<u>1,642,333</u>	<u>607,042</u>

Ստորև ներկայացված է հաշվետու ամսաթվի դրությամբ առավելագույն ենթարկվածությունը վարկային ռիսկին առևտրական դեբիտորական պարտքերի կտրվածքով՝ ըստ հաճախորդների տեսակների:

հազ. դրամ	Հաշվեկշռային արժեք	
	2007թ.	2006թ.
Մեծածախ ոլորտի հաճախորդներ	1,642,333	607,042

Արժեզրկումից կորուստներ

Հաշվետու ամսաթվի դրությամբ առևտրական դեբիտորական պարտքերի ժամկետայությունը հետևյալն էր.

հազ. դրամ	Համախառն	Արժեզրկում	Համախառն	Արժեզրկում
	2007թ.	2007թ.	2006թ.	2006թ.
Ոչ ժամկետանց	1,642,333	-	607,042	-

(բ) Իրացվելիության ռիսկ

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների պայմանագրային ժամկետայությունը, ներառյալ տոկոսների հաշվարկված վաճառումները՝ առանց հաշվանցման համաձայնությունների/պայմանագրերի ազդեցության:

2007թ. հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադրույք		Ցպահանջ	0-6 ամիս	6-12 ամիս	1-2 տարի	3-4 տարի	Ավելի քան 5 տարի	Ընդամենը
	Պայմանագրային	Արդյունավետ							
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ									
Վարկեր և փոխառություններ Գրավով ապահովված վարկ բանկից	LIBOR+4%	9.70%	-	75,751	75,751	1,029,176	953,425	-	2,134,103
Այլ կապակցված կողմեր	5.00%	5.00%	193,161	-	-	-	-	-	193,161
Այլ կապակցված կողմեր Գրավով չապահովված	10.00%	10.00%	-	206,958	-	-	-	-	206,958
պարտատոմսերի թողարկում	10.00%	10.00%	-	25,000	25,000	525,000	-	-	575,000
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	0.00%	0.00%	-	1,116,886	-	-	-	304,220	1,421,106
			<u>193,161</u>	<u>1,424,595</u>	<u>100,751</u>	<u>1,554,176</u>	<u>953,425</u>	<u>304,220</u>	<u>4,530,328</u>
2006թ. հազ. դրամ									
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ									
Վարկեր և փոխառություններ Գրավով ապահովված վարկ բանկից	LIBOR+2%	11.90%	-	1,675,040	-	-	-	-	1,675,040
Այլ կապակցված կողմեր	10.00%	10.00%	-	7,349	156,715	2,450	-	-	166,514
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	0.00%	0.00%	-	888,582	-	-	-	363,500	1,252,082
			<u>-</u>	<u>2,570,971</u>	<u>156,715</u>	<u>2,450</u>	<u>-</u>	<u>363,500</u>	<u>3,093,636</u>

(գ) Արտարժույթի ռիսկ

Ենթարկվածությունը արտարժույթի ռիսկին

Ստորև ներկայացված է Խմբի ենթարկվածությունը արտարժույթի ռիսկին՝ ելնելով պայմանական գումարներից:

հազ. դրամ	ԱՄՆ դոլարով	Ռուսական	ԱՄՆ դոլարով	Ռուսական
	արտահայտված 2007թ.	ռուբլով արտահայտված 2007թ.	արտահայտված 2006թ.	ռուբլով արտահայտված 2006թ.
Ընթացիկ ակտիվներ				
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	1,502,543	6,684	3,087,206	19,168
Ոչ ընթացիկ ակտիվներ				
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	-	-	-	-
Ընթացիկ պարտավորություններ				
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	(748,077)	-	(1,565,595)	-
Ոչ ընթացիկ պարտավորություններ				
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	(304,220)	-	(363,500)	-
Վարկեր և փոխառություններ	(1,825,320)	-	(1,650,340)	-
	<u>(1,375,074)</u>	<u>6,684</u>	<u>(492,229)</u>	<u>19,168</u>

Տարվա ընթացքում կիրառվել են ստորև ներկայացված հիմնական փոխարժեքները:

	Տարեվերջի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը համարժեք է 2007թ.	Տարեվերջի դրությամբ 1 ռուբլին համարժեք է 2007թ.	Տարեվերջի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը համարժեք է 2006թ.	Տարեվերջի դրությամբ 1 ռուբլին համարժեք է 2006թ.
ՀՀ դրամ	304.22	12.40	363.50	13.80

Զգայունության վերլուծություն

Դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի 10%-ով ամրապնդումը հետևյալ արժույթների հանդեպ կավելացներ (կնվազեցներ) սեփական կապիտալի և շահույթը կամ վնասը ստորև ներկայացված գումարների չափով: Այս վերլուծությունն ենթադրում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ: Վերլուծությունն իրականացվել է նույն հիմունքներով 2006թ. համար:

	Մեփական կապիտալ հազ. դրամ	Շահույթ կամ վնաս հազ. դրամ
2007թ.		
ԱՄՆ դոլար	137,507	137,507
Ռուսական ռուբլի	(668)	(668)
2006թ.		
ԱՄՆ դոլար	49,223	49,223
Ռուսական ռուբլի	(1,917)	(1,917)

Դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի 10%-ով թուլացումը վերը նշած արժույթների հանդեպ կունենար գումարային առումով նույն, սակայն հակառակ ազդեցություն վերը նշված գումարների վրա՝ ելնելով այն ենթադրությունից, որ մյուս բոլոր փոփոխականները կմնան անփոփոխ:

(դ) Տոկոսադրույքի ռիսկ

Կառուցվածքը

Հաշվետու ամսաթվի դրությամբ Խմբի տոկոսակիր ֆինանսական գործիքների տոկոսադրույքների կառուցվածքը հետևյալն էր.

հազ. դրամ	Հաշվեկշռային արժեք	
	2007թ.	2006թ.
Ֆիքսված դրույքով գործիքներ		
Ֆինանսական ակտիվներ	5,000	-
Ֆինանսական պարտավորություններ	(896,739)	(149,366)
	<u>(891,739)</u>	<u>(149,366)</u>
Փոփոխական դրույքով գործիքներ		
Ֆինանսական պարտավորություններ	(1,825,320)	(1,650,340)

Ֆիքսված դրույքով գործիքների իրական արժեքի զգայունության վերլուծություն

Խումբը ֆիքսված դրույքով ֆինանսական ակտիվները և պարտավորությունները չի հաշվառում որպես իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, ինչպես նաև չի նախատեսում ածանցյալներ գործիքները (տոկոսային սվոպերը) որպես հեջավորման գործիքներ ըստ իրական արժեքի հեջի հաշվառման մոդելի:

Փոփոխական դրույքով գործիքների գծով դրամական միջոցների հոսքերի զգայունության վերլուծություն

Հաշվետու ամսաթվի դրությամբ տոկոսադրույքի փոփոխությունը 100 բազիսային միավորով կավելացներ (կնվազեցներ) սեփական կապիտալի և շահույթը կամ վնասը ստորև ներկայացված գումարների չափով: Այս վերլուծությունն ենթադրում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես արտարժույթի փոխարժեքները, կմնան անփոփոխ: Վերլուծությունն իրականացվել է նույն հիմունքներով 2006թ. համար:

հազ. դրամ	Շահույթ կամ վնաս		Սեփական կապիտալ	
	100 քմ աճ	100 քմ նվազում	100 քմ աճ	100 քմ նվազում
2007թ.				
Փոփոխական դրույքով գործիքներ	(16,428)	16,428	(16,428)	16,428
2006թ.				
Փոփոխական դրույքով գործիքներ	(14,853)	14,853	(14,853)	14,853

(ե) Իրական արժեք

Սեփական կապիտալում չգնանշված ներդրումների իրական արժեքը ներկայացված է ծանոթագրություն 20-ում: Այլ դեպքերում ղեկավարությունը գտնում է, որ Խմբի ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը մոտավորապես հավասար է դրանց հաշվեկշռային արժեքին:

Դրամական միջոցների գնահատված հոսքերը գեղչելու համար կիրառված տոկոսադրույքները, կիրառելիության դեպքում, հիմնվում են հաշվետու ամսաթվի դրությամբ կառավարության պարտքային գործիքների եկամտաբերության կորի վրա՝ գումարած հապատասխան վարկային սպրեդը: Կիրառված տոկոսադրույքները հետևյալն են.

	2007թ.	2006թ.
Վարկեր և փոխառություններ	8.16%-10%	10%-12.35%

30 Պայմանական դեպքեր

(ա) Շրջակա միջավայրի պահպանություն

Ղեկավարության կարծիքով Խմբի գործունեությունը համապատասխանում է շրջակա միջավայրի պահպանությանը վերաբերող կառավարության բոլոր պահանջներին, այդ իսկ պատճառով վստահ է, որ Խումբը չունի որևէ էական ընթացիկ պարտավորություն շրջակա միջավայրի պահպանության հետ կապված: Այնուամենայնիվ, շրջակա միջավայրի պահպանությունը կարգավորող օրենսդրությունը մշակման փուլում է Հայաստանում, և օրենսդրության ու վերջինիս մեկնաբանությունների հնարավոր փոփոխությունները կարող են հիմք հանդիսանալ հետագա էական պարտավորությունների առաջացման համար:

(բ) Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռևս չեն կիրառվում Հայաստանում: Խմբի շենքերը և սարքավորումները ապահովագրված չեն: Այն ապահովագրված չէ գործունեության ընդհատման և երրորդ կողմերի նկատմամբ պարտավորությունների հանդեպ, որոնք կարող են առաջանալ գույքին կամ շրջակա միջավայրին վնաս հասցնելուց առաջացած Խմբի տարածքում տեղի ունեցած պատահարներից կամ նրա գործունեությունից հասցված վնասից: Քանի դեռ Խումբը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Խմբի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

(գ) Օրենսդրություն

Խումբը ներգրավված չէ այնպիսի նշանակալի դատական գործերում, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ իր ֆինանսական վիճակի վրա, բացառությամբ փոպիատուցելի ԱԱՀ-ի վերաբերյալ հարկային մարմինների հետ տաևաձայնության (տես՝ ծանոթագրություն 22): Հայաստանի Հանրապետության Տնտեսական դատարանը ի սկզբանե որոշումը կայացրել է հոգուտ Ընկերության, այնուամենայնիվ հարկային մարմինները դիմել են Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարան:

(դ) Հարկային օրենսդրության հակասություններ և երկիմաստություններ

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հաճախակի փոփոխություններով, որոնք հաճախ հստակ չեն, հակասական են և տարբեր մեկնաբանությունների առարկա են: Հարկերն ենթակա են ստուգման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային տարին հարկային մարմինների կողմից ենթակա է ստուգման հաջորդ երեք օրացուցային տարիների ընթացքում:

Այս փաստերը Հայաստանում կարող են այլ երկրների համեմատությամբ ավելի մեծ և էական հարկային ռիսկ առաջացնել: Դեկլարությունը գտնում է, որ համապատասխանորեն է գնահատել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի գործող հարկային օրենսդրության իր մեկնաբանությունների, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են լինել էական այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

(ե) Լիցենզավորման պայմանագիր

2007թ. հոկտեմբերին Ընկերությունը Լիցենզավորման պայմանագիր է կնքել Առևտրի ու տնտեսական զարգացման նախարարության և Բնապահպանության նախարարության հետ (Իրավասու մարմիններ): Լիցենզավորման պայմանագրի համաձայն Իրավասու մարմիններն Ընկերությանն են փոխանցում Թեղուտի պղնձա-մոլիբդենային հանքավայրի 105 միլիոն տոննա չափով պաշարների (տարեկան 7 տոննա) վերահսկման և շահագործման իրավունքը մինչև 2026թ.: Ընկերությունը պարտավոր է ավարտել նախապատրաստական աշխատանքները մինչև 2011թ. հուլիսը և սկսել հանքավայրի շահագործումը: Սկսած 2008թ-ից Ընկերությունը պարտավոր է վճարել 2,953 հազար դրամ գործարով տեղանքի վերականգնման տարեկան վճար:

31 Գործառնական ռիսկեր

(ա) Հանքեր

Ըստ իրենց ելության հանքերն ենթակա են բազմաթիվ գործառնական ռիսկերի և գործոնների ազդեցության, որոնք, որպես կանոն, գտնվում են Ընկերության վերահսկողության սահմաններից դուրս և կարող են ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության, գործառնական արդյունքների և դրամական միջոցների հոսքերի վրա: Այս գործառնական ռիսկերը և գործոնները ներառում են, սակայն չեն սահմանափակվում՝ (i) գրունտի և ջրի անկանխատեսելի պայմաններով և ջրօգտագործման իրավունքների հետ կապված անբարենպաստ հայցերով, (ii) աշխարհագրական խնդիրներով, ներառյալ երկրաշարժերը և այլ բնական աղետները, (iii) մետալուրգիական և մշակման այլ գործընթացների հետ կապված խնդիրներով, (iv) արտասովոր եղանակային կամ գործառնական պայմաններով կամ այլ ֆորս-մաժորային իրադարձություններով, (v) հանքանյութի ակնկալվողից ցածր որակով կամ վերականգնման դրույքներով, (vi) վթարներով, (vii) կառավարության կողմից անհրաժեշտ թույլտվությունների ոչ ժամանակին կամ ընդհանրապես չտրամադրմամբ, (viii) դատական գործերի արդյունքներով, ներառյալ ընդունված որոշումների բողոքարկմամբ, (ix) հետազոտական և մշակման աշխատանքների հետ կապված անորոշություններով, (x) փոխադրման ուշացումներով, (xi) աշխատանքային վիճաբանություններով, (xii) համապատասխան ապահովագրական փաթեթի ձեռք բերման անկարողությամբ, (xiii) նյութերի և սարքավորումների բացակայությամբ, (xiv) սարքավորումների և գործընթացների հետ կապված խափանումներով, որոնք կապված են

գործունեության հատկորոշումների կամ ակնկալիքների անհամապատասխանության հետ, (xv) անկանխատեսելի դժվարություններով՝ ձեռք բերված միավորումների համախմբման և ակնկալվող միասնության ձեռք բերման հետ կապված և (xvi) ֆինանսավորում ստանալու փորձերի արդյունքներով և ֆինանսական շուկայի պայմաններով:

(բ) Պղնձի և մոլիբդենի գների տատանումներ

Ընկերության ֆինանսական գործունեությունը զգալիորեն կախված է պղնձի գնից, որի վրա ազդեցություն ունեն Ընկերության վերահսկողության սահմաններից դուրս գտնվող բազմաթիվ գործոններ: Պղնձի առք ու վաճառքն իրականացվում է Լոնդոնի մետաղների բորսայում (LUF), Նյու Յորքի սպրանքային բորսայում (ԱԲ) and Շանխայի ֆյուչերսների բորսայում (ՇՖԲ): Ընկերության պղինձը վաճառվում է LUF գնանշված գներով: Այս բորսայում ներկայացված պղնձի գնի վրա էական ազդեցություն ունեն բազմաթիվ գործոններ, ներառյալ, (i) պղնձի պահանջարկը և առաջարկն աշխարհի մասշտաբով, (ii) համաշխարհային տնտեսության աճի տեմպերը, ինդուստրիալ արտադրության միտումները և բնակարանաշինության ու ավտոմոբիլային արդյունաբերության պայմանները, որոնցից բոլորը կորրելացվում են պղնձի պահանջարկի հետ, (iii) Չինաստանի տնտեսական աճը և քաղաքական պայմանները, որը դարձել է մաքուր պղնձի աշխարհի ամենախոշոր սպառողը և այլ զարգացող տնտեսությունները, (iv) սպեկուլյատիվ ներդրումային դիրքերը պղնձի և պղնձի ֆյուչերսների հետ կապված, (v) փոխարինող նյութերի առկայությունը և արժեքը և (vi) փոխարժեքի տատանումները, ներառյալ ԱՄՆ դոլարի համեմատական կայունությունը: Պղնձի շուկան բնորոշվում է փոփոխական և ցիկլային բնույթով: 2007թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվան նախորդող երեք տարիների ընթացքում LUF օրական հաշվարկային գները տատանվել են 3.072-ից 8.788 ԱՄՆ դոլար մեկ տոննա պղնձի համար: 2000թ-ի սկզբում պահանջարկի կտրուկ անկումից և գների համապատասխան նվազեցումից հետո, 2003թ. վերջում պղնձի շուկայում սկսվեց աճի միտում և շարունակվեց 2007թ. ընթացքում: Պղնձի ցածր գների գերակայման երկարատև ժամանակաշրջանը կարող է անբարենպաստ ազդեցություն ունենալ Ընկերության շահույթի և դրամական միջոցների հոսքերի վրա:

32 Գործարքներ կապակցված կողմերի հետ

(ա) Վերահսկողություն

Ընկերության մայր ընկերությունն է Լիխտենշտեյնում հիմնադրված ՎԱԼԵՔՍ Ֆ.Մ. Իսթերլիշմենթը:

Ընկերության վերջնական վերահսկող անձը պրն. Վալերի Սեջլումյանն է:

Ընկերության մայր ընկերությունը, վերջնական վերահսկող անձը կամ որևէ այլ միջանկյալ վերահսկող անձ չեն ներկայացնում հանրությանը մատչելի ֆինանսական հաշվետվություններ:

(բ) Դեկավարության վարձատրություն

Ստորև ներկայացված է աշխատավարձի գծով ծախսերում ներառված տնօրեններին և վերադաս ղեկավարությանը վճարված ընդհանուր վարձատրությունը:

	2007թ. հազ. դրամ	2006թ. հազ. դրամ
Տնօրեններ	21,544	11,128
Վերադաս ղեկավարություն	42,417	21,308
	63,961	32,436

(գ) Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ

տորև ներկայացված են այլ կապակցված կողմերի հետ գործարքները:

(i) Հասույթ

հազ. դրամ	Գործարքի արժեքը 2007թ.	Գործարքի արժեքը 2006թ.	Մնացորդը 2007թ.	Մնացորդը 2006թ.
Արտադրանքի իրացում.				
Մայր ընկերության այլ դուստր ընկերություններ				
«Բեյզ Սեթըլս» ՓԲԸ	100,497	150,250	99,847	4,179
«Վալլեքս Մայնինգ» ՍՊԸ	12,155	13,701	6,891	6,633
«Բեյզ Սեթըլս»-ի երևանյան գրասենյակ	-	-		63,681
Այլ				
«Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ	1,420	29,550	4,375	11,100
«Լոռվա ԵՀԿ» ՓԲԸ	340	-	-	-
«Մանես» ԲԲԸ	-	-	3,500	-
Մատուցված ծառայություններ.				
Մայր ընկերության այլ դուստր ընկերություններ				
«Բեյզ Սեթըլս» ՓԲԸ	5,069	32,164		-
«Վալլեքս Մայնինգ» ՍՊԸ	33,011	39,809	45,984	11,368
«Վալլեքս Այ Թի» ՍՊԸ	456	1,309	684	137
«Բեյզ Սեթըլս»-ի երևանյան գրասենյակ	533	533	2,727	2,087
Այլ				
«Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ	3,297	7,145	213,108	8,023
«Մանես» ԲԲԸ	-	454	152	152
«Գուգարքի Գ-ԵՈ» ԲԲԸ			672	
«Վալլեքս Գրուպ» ՓԲԸ	19,120		1500	-
	<u>175,898</u>	<u>274,915</u>	<u>379,440</u>	<u>107,360</u>

(ii) Ծախսեր

հազ. դրամ	Գործարքի արժեքը 2007թ.	Գործարքի արժեքը 2006թ.	Մնացորդը 2007թ.	Մնացորդը 2006թ.
Ապրանքների ձեռքբերում.				
Մայր ընկերության այլ դուստր ընկերություններ				
«Բեյզ Սեթըլս» ՓԲԸ	10,395,691	11,002,445	711,467	1,208,695
«Լոռվա ԵՂԿ» ՓԲԸ	7,931	8,956	-	547
«Վալլեքս Մայնինգ» ՍՊԸ	12,000	99,877	9,883	1,686
«Վալլեքս Էֆ Էմ Իսթ.» ՍՊԸ		-	35,595	42,530
«Վալլեքս Այ Թի» ՍՊԸ	2,824	41,108	3,283	1,818
«Բեյզ Սեթըլս»-ի երևանյան գրասենյակ	797,443	913,619	-	865
«Վալլեքս Գրուպ» ՓԲԸ	132	39	-	6
Այլ				
«Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ	-	27,990	-	-
«Մանես» ԲԲԸ	-	2,232	-	-
Մատուցված ծառայություններ.				
Մայր ընկերության այլ դուստր ընկերություններ				
«Բեյզ Սեթըլս» ՓԲԸ	2,500	5,179	7,032	-
«Լոռվա ԵՂԿ» ՓԲԸ	10,601	14,097	320	354
«Վալլեքս Մայնինգ» ՍՊԸ	1,888	960	192	960
«Վալլեքս Այ Թի» ՍՊԸ	1,022	1,260		1,260
«Բեյզ Սեթըլս»-ի երևանյան գրասենյակ	-	2,393	1,148	1,148
«Սեթըլ Տրանս»	1,659	107,167	3,024	1,990
«Վալլեքս Գրուպ» ՓԲԸ	16,850	1,800	-	-
Չհամախմբված դուստր ընկերություն				
«Գուգարքի ԳԵՈ» ԲԲԸ	12,080	10,927	-	2,085
Այլ				
«Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ	609,428	654,734	-	52,254
	11,872,049	12,894,783	771,944	1,316,198

(iii) Վարկեր

հազ. դրամ	Գումարը 2007թ.	Գումարը 2006թ.	Մնացորդը 2007թ.	Մնացորդը 2006թ.
Ստացված վարկեր.				
Մայր ընկերության այլ դուստր ընկերություններ				
«Բեյզ Սեթըլս» ՓԲԸ	374,791	146,971	396,739	149,366
	374,791	146,971	396,739	149,366

Մայր ընկերության այլ դուստր ընկերությունից ստացված երկու վարկից մեկի գծով կիրառվում է տարեկան 10% տոկոսադրույք և այն ենթակա է մարման 2008թ., մյուսը վարկը ցայահանջ է, որի համար սահմանված է 5% տոկոսադրույք:

(iv) Այլ վճարվելիք գումարներ բաժնետերերից

հազ. դրամ	Գումարը 2007թ.	Գումարը 2006թ.
Այլ վճարվելիք գումարներ բաժնետերերից	8,601	8,601

(դ) Գնային քաղաքականություն

Կապակցված կողմերի հետ գործարքները իրականացվում են շուկայական գների հիման վրա:

33 Խոշոր դուստր ընկերություններ

	Գրանցման վայրը	2007թ. Սեփականություն/ Չայների իրավունք	2006թ. Սեփականություն/ Չայների իրավունք
«Թեդուս» ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն	100%	-